



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 14(378) «06» օգոստոսի 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
301	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի N 94 որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 605-Ն որոշումը
302	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 226-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 606-Ն որոշումը
303	«Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 610-Ն որոշումը
304	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 611-Ն որոշումը
305	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N 589-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 616-Ն որոշումը
306	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 618-Ն որոշումը
307	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի N 21-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 623-Ն որոշումը
ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
308	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի N 53-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 27-ի N 6Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 51-Ն

	որոշումը	
309	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապիլի 26-ի N 18-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 52-Ն որոշումը	
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
310	«Վավերացման մակագրությունների օրինակելի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 200 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ արդարադատության նախարարի N 90-Ն հրամանը	
311	«Ավելացված արժեքի հարկի հաշվարկների ձևերն ու դրանց լրացման կարգերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2012 թվականի մարտի 26-ի N 4-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 200-Ն հրամանը	
312	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի փետրվարի 17-ի N 5-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 201-Ն հրամանը	
313	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2013 թվականի մարտի 05-ի N 4-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 202-Ն հրամանը	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 հունիսի 2019թ.

N 605-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի «Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին» N94 որոշման թիվ 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20-րդ կետով.

«20. «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոն» մասնաճյուղի շենք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 հունիսի 2019թ.

N 606-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 226-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» N 226-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ և 3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին՝ Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը:

3. Հանձնարարել Արցախի Հանրապետության շրջվարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին՝ երկամսյա ժամկետում իրականացնել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովների ստեղծման գործընթացը և ապահովել համապատասխան հանձնաժողովների անհատական կազմերի ու աշխատակարգերի հաստատումը:».

2) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 2-րդ կետում և 9-րդ կետի 1-ին ենթակետում «վարչապետի» բառը փոխարինել «կառավարության» բառով,

բ. 5-րդ և 7-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առնչվող փրկարար» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական» բառերով.

3) որոշմամբ հաստատված կարգում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՋ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2019թ.

N 610-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի N 450-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 49-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի 14-րդ ենթակետի «է» պարբերությունից հանել «ու նախաքննության» բառերը.

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի «I. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱՄԱՆՈՒՄՆԵՐ» բաժնի 2-րդ «Բաժիններ» կետից հանել «Քննչական բաժին» տողը:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

31 հուլիսի 2019թ.

N 611-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 376 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ծմակահողի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,254 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

31 հունիսի 2019թ.

N 616-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 589-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հիմնադրամների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 11-ի «Պոլ Էյուարի Տուն ֆրանկոֆոնիայի կենտրոն» հիմնադրամ հիմնադրելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» N589-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N1 հավելվածում 26-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«26. Խորհուրդը գլխավորում է Խորհրդի նախագահը, որն ի պաշտոնե Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարն է: Խորհրդի անդամներ են հանդիսանում ի պաշտոնե՝ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, ի պաշտոնե՝ Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի քաղաքապետը, ի պաշտոնե՝ Արցախի Հանրապետության Շուշի քաղաքի քաղաքապետը, ի պաշտոնե՝ Ֆրանսիայում Արցախի Հանրապետության ներկայացուցիչը, ի պաշտոնե՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի ներկայացուցիչը, ի պաշտոնե՝ Ֆրանսիական բարեկամ քաղաքների քաղաքապետերին միավորող միության նախագահը, ի պաշտոնե՝ Ֆրանսիայի Վալանս քաղաքի քաղաքապետը, ի պաշտոնե՝ Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի քաղաքապետը:»:

2) N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի հուլիսի 31-ի N 616-Ն որոշման

«Հավելված N2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 11-ի N 589-Ն որոշման

Կ Ա Ջ Մ

**«ՊՈԼ ԷԼՅՈՒԱՐԻ ՏՈՒՆ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

1. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար (Խորհրդի նախագահ)
2. Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար
3. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի քաղաքապետ
4. Արցախի Հանրապետության Շուշի քաղաքի քաղաքապետ
5. Ֆրանսիայում Արցախի Հանրապետության ներկայացուցիչ
6. «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի ներկայացուցիչ
7. Ֆրանսիական բարեկամ քաղաքների քաղաքապետերին միավորող միության նախագահ
8. Ֆրանսիայի Վալանս քաղաքի քաղաքապետ
9. Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի քաղաքապետ»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՁՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

31 հունիսի 2019թ.

N 618-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 165 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Նոր Մարաղայի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 օգոստոսի 2019թ.

N 623-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ղ ն շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2019 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 21-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 100-րդ կետի 4-րդ սյունակի «Երկրորդ եռամսյակ» բառերը փոխարինել «Չորրորդ եռամսյակ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» հուլիսի 2019 թվականի

N 51-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 6Ն
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ և 41-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում Էլեկտրական էներգիայի (հզորության) և բնական գազի ներկրման ու արտահանման գործունեության լիցենզավորման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 54Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6Ն որոշումը:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2019 թվականի հուլիսի 19-ի N 51-Ն որոշման

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի հոկտեմբերի 25-ի N 53-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է էներգետիկայի բնագավառում սույն կարգով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների իրականացման համար լիցենզիայի տրամադրման, գործողության ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման, ժամանակահատվածների ամրագրման և ճշգրտման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման ընթացակարգերը:

2. Լիցենզիան տրվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձանց:

3. Էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներն են.

1) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն, ջերմային էներգիայի արտադրություն կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրություն.

2) էլեկտրական էներգիայի հաղորդում, ջերմային էներգիայի փոխադրում կամ բնական գազի փոխադրում.

3) էլեկտրական էներգիայի բաշխում, ջերմային էներգիայի բաշխում կամ բնական գազի բաշխում.

4) էլեկտրական էներգիայի մատակարարում (ներկրում), արտահանում.

5) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կամ գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայություն.

6) էներգետիկական շուկային ծառայությունների մատուցում.

7) բնական գազի ներկրում կամ բնական գազի արտահանում:

4. Կարգավորման (այդ թվում՝ լիցենզավորման) ենթակա չեն՝

1) բացառապես սեփական կարիքների համար ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված և էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ արտադրության ժամանակահատվածում, ինչպես նաև ջերմային էներգիայի արտադրության գործունեությունը՝ կառուցման և արտադրության ժամանակահատվածում.

2) ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները, եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5,8 մեգավատտը.

3) անօրգանական և օրգանական վառելիք օգտագործող մինչև 1 մեգավատտ դրվածքային հզորությամբ կայանում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում.

4) մինչև 150 կիլովատտ դրվածքային հզորությամբ կայանում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում,

բացառությամբ հիդրոէլեկտրակայանների և սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերի.

5) վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ կառուցման (բացառությամբ փոքր հիդրոէլեկտրակայանների) և արտադրության ժամանակահատվածում:

5. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունների էությունը կազմող գործառույթները սահմանվում են համապատասխան գործունեության լիցենզիաներով: Լիցենզիայի անբաժանելի մասն են համարվում լիցենզավորված գործունեության իրականացման պայմանները:

6. Լիցենզիայի գործողության ժամկետը (ժամանակահատվածը) և գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (էլեկտրական էներգիայի և բնական գազի արտահանման կամ ներկրման լիցենզիաների դեպքում՝ համապատասխանաբար արտահանման կամ ներկրման վայրերը (երկրները)) սահմանվում է Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ և ամրագրվում տվյալ լիցենզիայում:

7. Էլեկտրական և ջերմային էներգիայի, բնական գազի առք ու վաճառք իրականացնել (վաճառքի նպատակով գնել) կարող են միայն համապատասխան գործունեության լիցենզիա ունեցող անձինք, եթե այլ բան նախատեսված չէ «Էներգետիկայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք):

8. Էլեկտրական էներգիայի ներկրումը կարող է իրականացվել միայն Հանձնաժողովի տված գործունեության այն տեսակի լիցենզիայի շրջանակում, որը, Օրենքի համաձայն, ներառում է էլեկտրական էներգիայի ներկրում իրականացնելու իրավունքը՝ Օրենքին և շուկայի կանոններին համապատասխան:

9. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիաները տրվում են՝ հաշվի առնելով տեղական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը, ներքին շուկայի սպառողների շահերի պաշտպանությունը՝

1) մինչև 30 մեգավատտ դրվածքային հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների պարագայում՝ նաև հաշվի առնելով էներգետիկայի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի՝ Արցախի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերից բխող առաջարկությունները՝ տվյալ կայանների տարեկան գումարային հզորությունների առավելագույն չափաքանակների վերաբերյալ.

2) 30 մեգավատտ և ավելի դրվածքային հզորությամբ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների պարագայում՝ նաև ստանալով էներգետիկայի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի համաձայնությունը:

10. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող անձինք կարող են զբաղվել այդ գործունեությամբ լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից մինչև դրա գործողության ժամկետի ավարտը, իսկ ժամանակահատված ամրագրված լինելու դեպքում՝ այդ ժամանակահատվածում: Լիցենզիան ուժի մեջ է մտնում «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

11. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Լիցենզիայի պայմաններով նախատեսված դեպքերում լիցենզիայի էությունը կազմող գործառույթները կարող են պատվիրակվել այլ անձանց միայն Հանձնաժողովի համաձայնությունը ստանալուց հետո:

12. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող անձանց վրա:

13. Լիցենզիայի տրման (ժամանակահատվածի ամրագրման), լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիայի կրկնօրինակի տրման համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափով: Հայտատուի (լիցենզավորված անձի) կողմից պետական տուրքի վճարման և օրենքով սահմանված ժամկետում այն չվճարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքներով:

14. Օտարերկրյա իրավաբանական անձինք Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են իրականացնել լիցենզավորման ենթակա գործունեություն օտարերկրյա պետությունների տված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

15. Սույն կարգով նախատեսված իրազեկումը, այդ թվում՝ փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետում՝ հաշվի առնելով սույն կարգով նախատեսված առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 2. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏԻ ՔՆՍԱԴԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

16. Լիցենզիա ստանալու համար Հանձնաժողով է ներկայացվում հայտ, որը պետք է լրացված լինի սույն կարգի հավելված N 1-ի համաձայն և պարունակի սույն կարգի հավելված N 2-ով տվյալ տեսակի լիցենզիայի համար նախատեսված փաստաթղթերը:

17. Հայտատուն, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

18. Հայտը և նրանում ընդգրկված փաստաթղթերը պետք է համապատասխանեն Արցախի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին:

19. Հայտը Հանձնաժողով մուտքագրվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները ստուգում են հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը և համապատասխանությունը սույն կարգի պահանջներին:

20. Հայտում ոչ էական թերությունների (վրիպակների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերի թերի լինելու դեպքում Հանձնաժողովը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև սույն կարգի 19-րդ կետում նշված ժամկետի ավարտը, գրավոր առաջարկում է հայտատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել այդ թերությունները, որի դեպքում նշված կետով սահմանված ժամկետը երկարաձգվում է մինչև հայտատուի կողմից համապատասխան թերությունների վերացումը, բայց ոչ ուշ, քան մինչև դրա համար սահմանված ժամկետի ավարտը:

21. Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են և հայտատուն սույն կարգի 20-րդ կետով սահմանված ժամկետում չի վերացրել թերությունները, ինչպես նաև սույն կարգի 25-րդ կետում նշված հայտի մերժման հիմքեր ի հայտ գալու դեպքում:

22. Հանձնաժողովը հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի մասին իրազեկում է հայտատուին՝ հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն կարգի 20-րդ կետով նախատեսված դեպքի: Հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի դեպքում հայտը պահպանվում է Հանձնաժողովում:

23. Հայտատուն, Հանձնաժողովի կողմից հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի պատճառները վերացնելուց հետո, հայտը կարող է կրկին մուտքագրել Հանձնաժողով: Այդ դեպքում հայտատուն և Հանձնաժողովն առաջնորդվում են սույն կարգի 19-22-րդ կետերով սահմանված պահանջներով և ժամկետներով:

24. Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովն սկսում է այն քննարկելու գործընթացը և կայացնում համապատասխան որոշում՝ սկսած հայտատուի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Հանձնաժողով ներկայացնելու պահից 80 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության, որոնց դեպքում համապատասխան որոշումը կայացվում է սկսած հայտատուի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Հանձնաժողով ներկայացնելու պահից 25 աշխատանքային օրվա ընթացքում:

25. Հանձնաժողովը հայտը մերժում է, եթե՝

1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները չեն համապատասխանում օրենքների, սույն կարգի կամ այլ իրավական ակտերի պահանջներին.

2) լիցենզիա տալու դեպքում սահմանափակվում է մեկ այլ լիցենզավորված անձին տրված իրավունքը.

3) լիցենզավորվող գործունեության իրականացումը կհանգեցնի էներգետիկայի բնագավառի հուսալիության և անվտանգության ցուցանիշների խաթարման կամ Արցախի Հանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման, ներքին շուկայի սպառողների շահերի խախտման.

4) հայտատուն օրենքի, այլ իրավական ակտերի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով, կամ գտնվում է սնանկության կամ լուծարման գործընթացում.

5) բնական գազի ներկրման կամ արտահանման լիցենզավորվող գործունեության իրականացումը հնարավոր չէ ներկրման կամ արտահանման առաջարկվող ռեժիմների պայմաններում կամ հանգեցնում է, կամ կարող է հանգեցնել էներգետիկայի բնագավառի հուսալիության և անվտանգության խաթարման կամ հակասում է, կամ կարող է հակասել ներքին շուկայի սպառողների շահերին.

6) մինչև 30 մեգավատտ դրվածքային հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների պարագայում՝ տվյալ կայանների տարեկան գումարային հզորությունների առավելագույն չափաքանակները լրացած, կամ լիցենզիան տրամադրելու պարագայում լրանալու դեպքում.

7) 30 մեգավատտ և ավելի դրվածքային հզորությամբ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների պարագայում էներգետիկայի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի համաձայնությունը չստանալու դեպքում:

26. Հայտի մերժման մասին Հանձնաժողովի որոշումը չի կարող ազդեցություն ունենալ անձի՝ հաջորդ հայտերի քննարկման վրա:

27. Հանձնաժողովը լիցենզիայի տրման կամ հայտի մերժման մասին որոշման պատճենը «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում հանձնում է հայտատուին:

28. Հանձնաժողովը լիցենզիա տրամադրելու մասին որոշում ընդունելուց հետո լիցենզավորված անձի ներկայանալու դեպքում լիցենզիան՝ մեկ օրինակից անմիջապես առձեռն հանձնում է վերջինիս, իսկ չներկայանալու դեպքում՝ լիցենզիան պահվում է Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումում՝ մինչև լիցենզավորված անձի ներկայանալը: Լիցենզիա ստացած անձի ստորագրությամբ լիցենզիայի ստացման կտրոնը (հավելված N 6) պահվում է Հանձնաժողովում:

29. Հանձնաժողովում յուրաքանչյուր լիցենզավորված անձի համար վարվում է հաշվառման գործավարություն և կազմվում անհատական գործ: Լիցենզիայի գործողությունը դադարեցվելու դեպքում անհատական գործը պահվում է Հանձնաժողովում օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

**ԳԼՈՒԽ 3. ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ), ՋԵՐՄԱՅԻՆ
ԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԵՎ ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ
ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ**

30. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում էլեկտրական էներգիա արտադրող կայան (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայան) կառուցելու (վերակառուցելու), էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և շուկայի կանոնների համաձայն այն վաճառելու կամ արտահանելու իրավունք, ինչպես նաև այն դեպքերում, երբ արտադրողը սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտականությունները՝ այդ նպատակով էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիա գնելու իրավունք:

31. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձինք Հանձնաժողովի սահմանած սակագներով պարտավոր են էլեկտրական էներգիան վաճառել շուկայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով: Մնացած դեպքերում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձինք էլեկտրական էներգիան կարող են վաճառել շուկայի մասնակիցներին կամ արտահանել չկարգավորվող գներով:

32. Ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում ջերմային էներգիա արտադրող կայան կառուցելու (վերակառուցելու), ջերմային էներգիա արտադրելու և Հանձնաժողովի սահմանած կարգով դա վաճառելու իրավունք: Ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի համար սակագինը սահմանվում է կայանի կառուցման ավարտից հետո:

33. Կայանի կառուցումը, բացառությամբ սույն կարգով նախատեսված չլիցենզավորման դեպքերի, կարող է իրականացվել էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայում կառուցման ժամանակահատվածի ամրագրման դեպքում:

34. Արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրվում է 2019 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ժամանակահատվածի համար՝ մինչև 5 մեգավատտ (ներառյալ) տեղակայվող (տեղակայված) հզորությամբ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեության համար:

35. Սույն կարգի 34-րդ կետով նախատեսված արևային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա չի տրամադրվում և Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի N 18-Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայի համաձայն սակագին չի սահմանվում, եթե լիցենզիայի տրամադրման արդյունքում արևային էլեկտրակայանի գումարային հզորությունը 2019 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ժամանակահատվածի համար գերազանցում է 50 մեգավատտը (ներառյալ):

36. Հողմային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրվում և Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի N 18-Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայի համաձայն սակագին սահմանվում է մինչև 30 մեգավատտ (ներառյալ) տեղակայվող (տեղակայված) հզորությամբ կայանների համար՝ առանց գումարային հզորության սահմանափակման:

37. 30 մեզավատտը գերազանցող հզորությամբ հողմային և 5 մեզավատտը գերազանցող հզորությամբ արևային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաներ տրամադրվում են պետություն-մասնավոր գործընկերություն գործարքների շրջանակում:

38. Մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) վերականգնվող էներգետիկ այլ ռեսուրսներ օգտագործող էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաներ տրամադրվում են առանց գումարային հզորության սահմանափակման:

39. Արևային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու մեկից ավելի հայտերի ներկայացման դեպքում, որոնց բավարարումը կհանգեցնի ամրագրված գումարային հզորության սահմանաչափի գերազանցման, հայտերը ուսումնասիրվում, քննարկվում են ըստ ներկայացման հաջորդականության և յուրաքանչյուր ժամանակահատվածի համար սահմանված սահմանաչափի շրջանակում:

40. Սույն կարգի 35-րդ կետով սահմանված սահմանաչափերի շրջանակում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց լիցենզիաներով ամրագրված հզորությունների փոփոխման դիմումները Հանձնաժողովը քննարկում է ըստ դիմումների ներկայացման հաջորդականության:

41. Սույն կարգի 34-րդ կետով ամրագրված կարգավորումները չեն տարածվում բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության, ինչպես նաև ինքնավար էներգաարտադրողների գործունեության վրա:

42. Կառուցման ժամանակահատված ներառող արտադրության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է այդ լիցենզիայով ամրագրված ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), մինչև լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ և լիցենզիայում փոփոխություններ կատարելու համար դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի և ավարտական ակտի (շահագործման թույլտվության) պատճենները.

2) կայանի (հիդրոէլեկտրակայանների դեպքում ներառյալ գլխամասային հանգույցի) նկատմամբ լիցենզավորված անձի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի (վկայականների) պատճենը (պատճենները), եթե Արցախի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվում է նշված իրավունքների պետական գրանցում, իսկ Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն նշված իրավունքների պետական գրանցում չպահանջվելու դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան հիմնավորումներ.

3) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ էներգատեղակայանքի գործարկման եզրակացության պատճենը.

4) կայանում տեղակայված սարքավորումների (ագրեգատների) վերաբերյալ տեղեկանք՝ դրանց մակնիշի, հզորության, արտադրության տարեթվի նշումով՝ կցելով անհրաժեշտ հիմնավորումներ.

5) էլեկտրական էներգիայի (հզորության) կամ ջերմային էներգիայի վաճառքի սակագնի սահմանման հայտ, բացառությամբ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դեպքերի:

43. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում արտադրության լիցենզիա ունեցող անձինք Նախագծի և սույն կարգի 42-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերի փոխարեն Հանձնաժողով են ներկայացնում

ինքնակամ կառույցների օրինականացման, առկայության դեպքում՝ նաև տնօրինման մասին որոշումների պատճենները:

44. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձանց կողմից կայանի կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրական էներգիայի հաշվառումն իրականացվում է Հանձնաժողովի սահմանած օրինակելի ձևին համապատասխան կնքված պայմանագրի հիման վրա:

45. Սույն կարգի 42-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո Հանձնաժողովը սույն կարգի 24-րդ կետով սահմանված ժամկետում կայացնում է կայանի փաստացի տեղակայված հզորությունն ու կայանում տեղակայված սարքավորումների (ագրեգատների) տվյալները արտադրության լիցենզիայում ամրագրելու վերաբերյալ որոշում (բացառությամբ արևային էլեկտրակայանների)՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածը (ժամանակահատվածները), կամ գրավոր մերժում է դիմումը՝ սույն կարգի 25-րդ կետով սահմանված հիմքերով, բացառությամբ լիցենզավորված անձի սնանկության գործընթացում գտնվելու հիմքի:

46. Արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ հետևյալ պայմաններով.

1) 1-ին անգամ երկարաձգվելու դեպքում՝ առանց որևէ վարչական և ֆինանսական պատասխանատվության.

2) 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ սույն կարգի հավելված N 3-ի համաձայն երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Արցախի Հանրապետության պետական բյուջե.

3) սույն կետի 2-րդ ենթակետի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում արտադրության լիցենզիայի գործողությունը կասեցվում է:

47. Կայանի վերակառուցման այն դեպքերում, երբ կատարվելու են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքներ, և որոնք հանգեցնելու են կայանի լիցենզիայով ամրագրված հաշվարկային (արևային և հողմային էլեկտրակայանների դեպքում՝ տեղակայված) հզորության փոփոխության, արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայի պայմաններում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու համար դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, ինչպես նաև Էլեկտրական էներգիայի բաշխման կամ հաղորդման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միանալու նախնական տեխնիկական պայմաններ՝ էլեկտրական ցանցին միացման կետի վերաբերյալ տեղեկատվության նշումով՝ էլեկտրական էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիաների պարագայում.

2) կայանի հաշվարկային (արևային և հողմային էլեկտրակայանների դեպքում՝ տեղակայված) հզորության ավելացման դեպքում՝ ավելացող հզորության չափով երաշխիք՝ համաձայն սույն կարգի N 3 հավելվածի.

3) լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ համապատասխան նպատակային (գործառական) նշանակությամբ հողամասի (շենք, շինության) նկատմամբ լիցենզավորված անձի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված հատակագծի

պատճենը: Հողամասի (շենք, շինության) վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման դեպքում, էթե սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականում առկա չէ նշում վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման ժամկետի վերաբերյալ, անհրաժեշտ է ներկայացնել նաև վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը, ընդ որում, ենթավարձակալության դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը: Այդ ժամկետները պետք է լինեն լիցենզիայի գործողության ժամկետից ոչ պակաս:

4) հիդրոէլեկտրակայանի վերակառուցման դեպքում՝ հաշվարկային ելքի և (կամ) ջրառի և ջրօգտագործման նիշերի փոփոխության դեպքում՝ ջրօգտագործման թույլտվություն:

48. Հանձնաժողովը սույն կարգի 24-րդ կետով սահմանված ժամկետում կայացնում է էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի պայմաններում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու վերաբերյալ որոշում կամ գրավոր մերժում է դիմումը՝ սույն կարգի 25-րդ կետով սահմանված հիմքերով:

49. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձինք պարտավոր են մինչև լիցենզիայով սահմանված վերակառուցման ժամանակահատվածի ավարտը լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով սույն կարգի 42-րդ կետի 1-4-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև սակագնի սահմանման հայտ:

50. Սույն կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո Հանձնաժողովը որոշում է ընդունում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով վերակառուցման ժամանակահատվածը, կամ գրավոր մերժում է դիմումը՝ սույն կարգի 25-րդ կետով սահմանված հիմքերով, բացառությամբ լիցենզավորված անձի սնանկության գործընթացում գտնվելու հիմքի:

**ԳԼՈՒԽ 4. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՂՈՂՄԱՆ,
ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ
ՓՈՆՄԱՂՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ**

51. Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձին տրվում է Արցախի Հանրապետության տարածքում էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման ծառայություն իրականացնելու, էլեկտրական էներգիայի հաղորդման ցանց կառուցելու (վերակառուցելու) իրավունք: Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել շուկայի կանոններին և պայմանագրերին համապատասխան:

52. Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձանց, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և շուկայի մասնակիցների փոխհարաբերությունները կարգավորվում են շուկայի կանոններով և պայմանագրերով:

53. Բնական գազի փոխադրման լիցենզիա ունեցող անձին տրվում է Հանձնաժողովի սահմանած կարգով Արցախի Հանրապետության տարածքում բնական գազի փոխադրման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), բնական գազ փոխադրելու, արտադրողից (արդյունահանողից) կամ ներկրողից բնական գազ գնելու, բաշխման, արտահանման լիցենզիա ունեցող անձանց կամ անմիջապես սպառողին բնական գազ վաճառելու, Արցախի Հանրապետության տարածքով երրորդ երկրներ բնական գազ տարանցելու իրավունք:

54. Ջերմային էներգիայի փոխադրման լիցենզիա ունեցող անձին տրվում է Հանձնաժողովի սահմանած կարգով լիցենզիայով սահմանված տարածքում ջերմային

Էներգիայի փոխադրման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), արտադրողից ջերմային էներգիա ստանալու կամ գնելու, բաշխման լիցենզիա ունեցող անձանց առաքելու կամ անմիջապես սպառողին ջերմային էներգիա վաճառելու և կարգավարական ծառայություն իրականացնելու իրավունք: Ջերմային էներգիայի փոխադրման գործունեության իրավունքը, պայմանավորված ջերմային էներգիայի առաքման տեխնոլոգիայով, կարող է տրվել ջերմային էներգիայի արտադրության կամ բաշխման լիցենզիա ունեցող անձին միևնույն լիցենզիայով:

ԳԼՈՒԽ 5. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ, ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԲԱՇԽՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

55. Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձն ունի Արցախի Հանրապետության որոշակի տարածքում սպառողներին էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման և բաշխման ցանցի կարգավարման բացառիկ իրավունք, ինչպես նաև էլեկտրական էներգիայի բաշխման ցանց կառուցելու (վերակառուցելու) իրավունք:

56. Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին արգելվում է զբաղվել էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությամբ:

57. Բնական գազի բաշխման լիցենզիա ունեցող անձին տրվում է Արցախի Հանրապետության որոշակի տարածքում սպառողներին բնական գազ բաշխելու բացառիկ իրավունք, ինչպես նաև բաշխման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), Հանձնաժողովի սահմանած կարգով բնական գազ գնելու և վաճառելու իրավունք:

58. Ջերմային էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում սպառողներին ջերմային էներգիա բաշխելու իրավունք, ինչպես նաև ջերմային էներգիայի բաշխման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), Հանձնաժողովի սահմանած կարգով ջերմային էներգիա գնելու և վաճառելու իրավունք:

ԳԼՈՒԽ 6. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ (ՆԵՐԿՐՄԱՆ), ԱՐՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

59. Էլեկտրական էներգիայի մատակարարման (ներկրման), լիցենզիա ունեցող անձն ունի շուկայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով էլեկտրական էներգիա (հզորություն) ինքնավար էներգաարտադրողից գնելու և (կամ) ներկրելու իրավունք, և պարտավոր է լիցենզիայի պայմաններին ու կնքված պայմանագրերին համապատասխան՝ այն վաճառել իր հետ մատակարարման պայմանագիր կնքած սպառողներին:

60. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիա ունեցող անձին տրվում է էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանցից էլեկտրաէներգիա (հզորություն) գնելու և (կամ) իր կողմից արտադրված էլեկտրական էներգիան (հզորությունը) շուկայի կանոնների և լիցենզիայի պայմաններին համապատասխան արտահանելու իրավունք: Էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիա տրվում է միայն ներքին շուկայի հազցվածության դեպքում, երբ էլեկտրաէներգիայի արտահանումը չի հակասում ներքին շուկայի սպառողների շահերին:

61. Էլեկտրական էներգիայի մատակարարման (ներկրման), արտահանման լիցենզիաներ ունեցող անձինք պարտավոր են երաշխավորել գնված էլեկտրական էներգիայի (հզորության) դիմաց վաճառողների օգտին վճարումները Հանձնաժողովի սահմանած կարգով:

**ԳԼՈՒԽ 7. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ
ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ**

62. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է էլեկտրաէներգետիկական համակարգում մատուցելու էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայություն՝ հետևյալ բացառիկ գործառույթներով.

1) էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորում և կարգավարում.

2) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ կառավարում.

3) էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի զարգացման պլանավորում.

4) տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Արցախի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի զուգահեռ աշխատանքի ապահովում, ինչպես նաև լիցենզիայի պայմաններով և շուկայի կանոններով նախատեսված այլ ոչ բացառիկ գործառույթների իրականացման իրավունքներ:

63. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց կարգավարելիս էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք կհանգեցնեն սպառողների համար էլեկտրական էներգիայի (հզորության) նվազագույն ծախսումներով արտադրությանը և հաղորդմանը՝ հաշվի առնելով արտադրողներին տրված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքները:

64. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձին արգելվում է զբաղվել այլ լիցենզավորվող գործունեությամբ էներգետիկայի բնագավառում, բացառությամբ էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

65. Փազամատակարարման համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձին տրվում են բնական գազի ներկրման, փոխադրման (ներառյալ՝ պահեստավորման) և տարանցման օպերատիվ տեխնոլոգիական կարգավարման բացառիկ իրավունքներ:

66. Փազամատակարարման համակարգի օպերատորը պլանավորման, կորորդինացման և կարգավարման գործընթացներում պետք է լիցենզիայի պայմաններին համապատասխան ապահովի բնական գազի ներկրման, փոխադրման (ներառյալ՝ պահեստավորման) և տարանցման հուսալիությունն ու անվտանգությունը:

**ԳԼՈՒԽ 8. ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԿԱՄ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ**

67. Բնական գազի ներկրման լիցենզիա ունեցող անձն ունի բնական գազ ներկրելու և փոխադրման լիցենզիա ունեցող անձանց և (կամ) բնական գազի բաշխման լիցենզիա ունեցող անձանց և (կամ) անմիջապես սպառողին այն վաճառելու իրավունք՝ համաձայն Հանձնաժողովի սահմանած կարգի:

68. Բնական գազի արտահանման լիցենզիա ունեցող անձն ունի բնական գազի ներկրման, փոխադրման կամ բաշխման լիցենզիա ունեցող անձից բնական գազ գնելու և արտահանելու իրավունք՝ համաձայն Հանձնաժողովի սահմանած կարգի:

**ԳԼՈՒԽ 9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏԻ (ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ) ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ**

69. Լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի

(Ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը:

70. Հայտն իր մեջ պետք է պարունակի՝

1) լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ լիցենզավորված անձի հիմնավորումները, իսկ կառուցման ժամանակահատվածի երկարաձգման դեպքում՝ կառուցման ժամանակահատվածի համար իրականացված աշխատանքների մասին տեղեկություններ, որտեղ պետք է նշվեն նաև աշխատանքների չիրականացման պատճառները և դրանց իրականացման համար անհրաժեշտ ժամկետը՝ համապատասխան հիմնավորումներով:

2) հիդրոտեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված արտադրության ժամանակահատվածի երկարաձգման դեպքում՝ նաև ջրօգտագործման թույլտվությունը, իսկ խմելու ջրատարների կամ ոռոգման համակարգերի վրա կառուցված հիդրոտեկտրակայանների դեպքում՝ նաև այլ անձի (անձանց) պատկանող հիդրոկառույցը օգտագործելու (հիդրոկառույցից օգտվելու) վերաբերյալ պայմանագիր կամ հիդրոկառույցին միացման թույլտվություն:

3) էլեկտրական էներգիայի արտահանման լիցենզիայի երկարաձգման դեպքում՝

ա. համակարգի օպերատորի եզրակացությունը՝ արտահանման առաջարկվող ռեժիմների իրականացման հնարավորության և էներգետիկայի բնագավառի հուսալիության ու անվտանգության ցուցանիշների վրա ազդեցության վերաբերյալ:

բ. արտահանման պայմանագրի գործողության ժամկետն երկարաձգելու վերաբերյալ համաձայնագիր, եթե լիցենզիայի գործողության ժամկետը սահմանվել է արտահանման պայմանագրի գործողության ժամկետով արտահանման նոր պայմանագիր:

4) բնական գազի ներկրման կամ արտահանման լիցենզիաների երկարաձգման դեպքում՝

ա. համակարգի օպերատորի եզրակացությունը՝ ներկրման կամ արտահանման առաջարկվող ռեժիմների իրականացման հնարավորության և էներգետիկայի բնագավառի հուսալիության ու անվտանգության ցուցանիշների վրա ազդեցության վերաբերյալ:

բ. ներկրման կամ արտահանման պայմանագրի գործողության ժամկետն երկարաձգելու վերաբերյալ համաձայնագիր, եթե լիցենզիայի գործողության ժամկետը սահմանվել է ներկրման կամ արտահանման պայմանագրի գործողության ժամկետով կամ ներկրման կամ արտահանման նոր պայմանագիր:

71. Հանձնաժողովը որոշում է ընդունում լիցենզիայի գործողության ժամկետը (Ժամանակահատվածը) երկարաձգելու կամ հայտը մերժելու մասին հայտի մուտքագրման օրվանից 25 աշխատանքային օրվա ընթացքում՝ բայց ոչ ուշ, քան մինչև լիցենզիայի գործողության ժամկետի (Ժամանակահատվածի) ավարտը:

72. Հանձնաժողովը հայտը մերժում է, եթե՝

1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են կամ չեն համապատասխանում օրենքների, սույն կարգի կամ այլ իրավական ակտերի պահանջներին:

2) լիցենզավորվող գործունեության իրականացումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել էներգետիկայի բնագավառի հուսալիության և անվտանգության խաթարման կամ Արցախի Հանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման:

3) հայտատուն օրենքի, այլ իրավական ակտերի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:

4) լիցենզիան ստանալուց հետո անցած ժամանակաընթացքում փոփոխվել են լիցենզավորման պայմանները:

5) բնական գազի ներկրման կամ արտահանման լիցենզիաների դեպքում լիցենզավորվող գործունեության իրականացումը հնարավոր չէ ներկրման կամ արտահանման առաջարկվող ռեժիմների պայմաններում կամ հանգեցնում է, կամ կարող է հանգեցնել էներգետիկայի բնագավառի հուսալիության և անվտանգության խաթարման, կամ հակասում է, կամ կարող է հակասել ներքին շուկայի սպառողների շահերին:

73. Եթե լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման հայտը ներկայացվել է լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում, ապա այդ ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման հարցը քննարկվում է միայն կասեցումը վերացվելուց հետո:

74. Էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվում է նախկինում սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածից ոչ ավելի՝ հաշվի առնելով լիցենզավորված անձի, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակազմի կողմից հիմնավորվող ժամկետը:

ԳԼՈՒԽ 10. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

75. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել ինչպես լիցենզավորված անձի, այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ:

76. Լիցենզավորված անձը լիցենզիայում փոփոխություններ կատարելու համար դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտությունը և դրանք հիմնավորող փաստաթղթերը:

77. Հանձնաժողովը, սույն կարգի 24-րդ կետով սահմանված ժամկետում կայացնում է լիցենզավորված անձի լիցենզիայի պայմաններում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին համապատասխան որոշում կամ գրավոր մերժում է դիմումը՝ սույն կարգի 25-րդ կետով սահմանված հիմքերով, բացառությամբ լիցենզավորված անձի սնանկության գործընթացում գտնվելու հիմքի:

78. Հանձնաժողովի նախաձեռնությամբ լիցենզիայում փոփոխություններ կատարվում են լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Արցախի Հանրապետության օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:

79. Հանձնաժողովի նախաձեռնությամբ լիցենզիայում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը պատշաճ ձևով այդ մասին տեղեկացնում է լիցենզավորված անձին՝ հիմնավորելով փոփոխությունների անհրաժեշտությունը:

80. Լիցենզավորված անձն իր դիրքորոշումը Հանձնաժողովին հայտնում է Հանձնաժողովի սահմանած ժամկետում՝ անհամաձայնության դեպքում ներկայացնելով իր հիմնավորումները:

81. Լիցենզիայի գործողության կասեցումը կամ դադարեցումն իրականացվում է «Էներգետիկայի մասին» և «Լիցենզավորման մասին» օրենքներով, ինչպես նաև սույն կարգի 46-րդ կետով սահմանված դեպքերում և օրենսդրությամբ սահմանված կարգով:

82. Ի լրումն «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված լիցենզավորված անձի նախաձեռնությամբ լիցենզիայի գործողության կասեցման դեպքերի՝ լիցենզիայի գործողության կասեցման վերաբերյալ դիմումը Հանձնաժողովը կարող է մերժել նաև, եթե կասեցումը կարող է հանգեցնել Արցախի Հանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման կամ էներգետիկայի բնագավառում հուսալիության և անվտանգության խաթարման կամ ներքին շուկայի սպառողների շահերի խախտման:

ԳԼՈՒԽ 11. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

83. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15 օրվա ժամկետում լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ ներկայացնել՝ Հանձնաժողով՝ կցելով տեղեկություններ պետական գրանցման համարի (պետական հաշվառման համարի) վերաբերյալ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

84. Հայտերը բավարարվում կամ մերժվում են Հանձնաժողովի կողմից ոչ ուշ, քան հայտն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

85. Հայտը մերժվում է, եթե՝

- 1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են.
- 2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին.
- 3) հայտատուն օրենքի, այլ իրավական ակտերի կամ իր կանոնադրության համաձայն գրկվել է հայցվող գործունեության տեսակով զբաղվելու իրավունքից:

ԳԼՈՒԽ 12. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

86. 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը արևային էներգիայի կիրառմամբ ինքնավար էներգաարտադրողների տեղակայանքների դրվածքային հզորությունը կարող է հասնել Էլեկտրական էներգիայի իրենց սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությանը, բայց ոչ ավելի, քան 500 կիլովատտը, որոնց գործունեությունը ենթակա չէ կարգավորման կառուցման և արտադրության ժամանակահատվածներում:

ՀԱՅՏ ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Խնդրում եմ տալ լիցենզիա _____

(գործունեության վայրը (աշխարհագրական տարածքը))

2. Բրավաբանական (ֆիզիկական) անձի անվանումը, (անունը, ազգանունը)
կազմակերպական-իրավական ձևը _____

3. Գտնվելու (բնակության) վայրը _____

4. Հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն _____

5. Պետական գրանցման (հաշվառման) համարը, հարկ վճարողի հաշվառման
համարը _____

6. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը _____

7. Լիցենզիայի հայցվող ժամկետը (արտադրության լիցենզիաների դեպքում՝ նաև
կառուցման ժամանակահատվածը) _____

8. Հայտին կցվում են՝

1) _____

2) _____

3) _____

4) _____

5) _____

6) _____

7) _____

8) _____

9) _____

10) _____

9. Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ

(Հայտատուի (գործադիր մարմնի ղեկավարի) անուն, ազգանուն, ստորագրություն)

(օրը, ամիսը, տարին)

ՑԱՆԿ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Կայանի կառուցման ժամանակահատված ներառող էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի ստացման հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը.

1) գործարար ծրագիր՝ համաձայն սույն կարգի հավելված N 4-ի.

2) լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ համապատասխան նպատակային (գործառական) նշանակությամբ հողամասի (շենք, շինության) նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված հատակագծի պատճենը: Հողամասի (շենք, շինության) վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման դեպքում, եթե սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականում առկա չէ նշում վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման ժամկետի վերաբերյալ, անհրաժեշտ է ներկայացնել նաև վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը, ընդ որում, ենթավարձակալության դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը: Այդ ժամկետները պետք է լինեն լիցենզիա ստանալու հայտով հայցվող ժամկետից ոչ պակաս.

3) նախագծային կազմակերպության հետ կնքված պայմանագիր նախագծային-նախահաշվային աշխատանքներ կատարելու վերաբերյալ և դրանց կատարման ժամկետները.

4) հայտարարություն մամուլում՝ Արցախի Հանրապետությունում ամենամեծ տպաքանակ ունեցող թերթում՝ համաձայն սույն կարգի հավելված N 5-ի.

5) երաշխիք՝ համաձայն սույն կարգի հավելված N 3-ի.

6) ջրօգտագործման թույլտվություն՝ հիդրոէլեկտրակայաններում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար.

7) այլ անձի (անձանց) պատկանող հիդրոկառույցը օգտագործելու (հիդրոկառույցից օգտվելու) վերաբերյալ պայմանագիր կամ հիդրոկառույցին միացման թույլտվություն՝ միայն խմելու ջրատարների կամ ռոռզման համակարգերի վրա կառուցվող հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության համար.

8) էլեկտրական էներգիայի բաշխման կամ հաղորդման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միանալու նախնական տեխնիկական պայմաններ՝ էլեկտրական ցանցին միացման կետի վերաբերյալ տեղեկատվության նշումով՝ էլեկտրական էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի դեպքում:

2. Կայանի կառուցման ժամանակահատված չներառող էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի ստացման հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը.

1) կառուցված (վերակառուցված) կայանի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը հավաստող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները)։

2) կայանում տեղակայված սարքավորումների (ագրեգատների) վերաբերյալ տեղեկանք՝ դրանց մակնիշի, հզորության, արտադրության տարեթվի նշումով՝ կցելով անհրաժեշտ հիմնավորումներ։

3) ջրօգտագործման թույլտվություն՝ հիդրոէլեկտրակայաններում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար։

4) այլ անձի (անձանց) պատկանող հիդրոկառույցը օգտագործելու (հիդրոկառույցից օգտվելու) վերաբերյալ պայմանագիր կամ հիդրոկառույցին միացման թույլտվություն՝ միայն խմելու ջրատարների կամ ոռոգման համակարգերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության համար։

5) էլեկտրական էներգիայի բաշխման կամ հաղորդման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միանալու նախնական տեխնիկական պայմաններ՝ էլեկտրական ցանցին միացման կետի վերաբերյալ տեղեկատվության նշումով՝ էլեկտրական էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի դեպքում։

3. էլեկտրական էներգիայի հաղորդման, ջերմային էներգիայի փոխադրման, բնական գազի փոխադրման, էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի և բնական գազի բաշխման, էլեկտրական էներգիայի մատակարարման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, գազամատակարարման համակարգի օպերատորի լիցենզիաների ստացման հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը։

1) գործարար ծրագիր։

2) լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գույքի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթեր, բացառությամբ էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիայի հայտի։

3) հայտարարություն մամուլում՝ Արցախի Հանրապետությունում ամենամեծ տպաքանակ ունեցող թերթում՝ համաձայն սույն կարգի հավելված N 5-ի։

4. էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիայի ստացման հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը։

1) համակարգի օպերատորի եզրակացությունը արտահանման առաջարկվող ռեժիմների իրականացման հնարավորության և էներգետիկայի բնագավառի հուսալիության ու անվտանգության վրա ազդեցության վերաբերյալ։

2) էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման գործունեություն իրականացնելու համար՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի հետ կնքված էլեկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագիր, բացառությամբ այն դեպքի, երբ հայտատուն ունի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա և արտահանում է բացառապես սեփական արտադրության էլեկտրական էներգիան, ինչպես նաև օտարերկրյա գնորդի հետ կնքված արտահանման պայմանագիր։

3) էլեկտրական էներգիայի արտահանման գործունեություն իրականացնելու համար՝ էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձի հետ կնքված էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման պայմանագիր։

5. Բնական գազի ներկրման, արտահանման լիցենզիաների ստացման հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը։

1) գազամատակարարման համակարգի օպերատորի եզրակացությունը ներկրման կամ արտահանման առաջարկվող ռեժիմների իրականացման հնարավորության և էներգետիկայի բնագավառի հուսալիության ու անվտանգության վրա ազդեցության վերաբերյալ։

2) բնական գազի ներկրման գործունեություն իրականացնելու համար՝ օտարերկրյա առաքողի հետ կնքված ներկրման պայմանագիր:

3) բնական գազի արտահանման գործունեություն իրականացնելու համար՝ բնական գազի փոխադրման լիցենզիա ունեցող անձի հետ կնքված բնական գազի փոխադրման պայմանագիր, եթե հայտատուն չունի բնական գազի փոխադրման լիցենզիա:

4) բնական գազի արտահանման գործունեություն իրականացնելու համար՝ բնական գազի բաշխման, փոխադրման կամ ներկրման լիցենզիա ունեցող անձի հետ կնքված բնական գազի առուվաճառքի պայմանագիր, եթե հայտատուն չունի բնական գազի բաշխման, փոխադրման կամ ներկրման լիցենզիա, ինչպես նաև օտարերկրյա գնորդի հետ կնքված արտահանման պայմանագիր:

Հավելված N 3
Էներգետիկայի բնագավառում
գործունեության լիցենզավորման կարգի

ԿԱՐԳ

ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈՒԱՆՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կառուցման ժամանակահատված ներառող էլեկտրական կամ ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) լիցենզիա (այսուհետ՝ արտադրության լիցենզիա) ստանալու, կամ արտադրության լիցենզիայում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու, ինչպես նաև նշված ժամանակահատվածները երկարաձգելու նպատակով հայտատուն Հանձնաժողով է ներկայացնում Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ բանկի կողմից տրամադրված երաշխիք, որով բանկը գրավոր պարտավորություն է ստանձնում հայտատուի կողմից լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում սույն կարգի 3-րդ կետի համաձայն հաշվարկված գումարը, Հանձնաժողովի որոշման կամ գրության հիման վրա, Հանձնաժողովի սահմանած ժամկետում, անվիճելի և անառարկելի կարգով փոխանցել Արցախի Հանրապետության պետական բյուջե:

2. Հայտատուն պարտավոր է երաշխիքը ներկայացնել արտադրության լիցենզիայի կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի համար իր կողմից հայցվող, իսկ ժամանակահատվածի երկարաձգման դեպքում՝ երկարաձգման ժամկետից առնվազն 45 օր ավելի գործողության ժամկետով:

3. Երաշխիքով սահմանված գումարի հաշվարկման բազա է սահմանվում «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի չափը: Երաշխիքով սահմանված գումարի մեծությունը պետք է հավասար լինի կառուցվող կայանի հաշվարկային (տեղակայվող) հզորության (արտահայտված կիլովատտերով) և «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի երկուսուկեսապատիկի արտադրային, սակայն ոչ պակաս, քան 500 000 ՀՀ դրամը: Էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի դեպքում կայանի հաշվարկային հզորությունը հաշվարկվում է որպես էլեկտրական և ջերմային հաշվարկային հզորությունների գումար:

4. Սույն կարգով սահմանված երաշխիքը չի պահանջվում, եթե հայտատուն Հանձնաժողով է ներկայացրել Արցախի Հանրապետության կառավարության կողմից տրված բյուջետային երաշխիք:

5. Լիցենզիայի պայմանները սահմանված ժամկետում կամ վաղաժամկետ կատարելու դեպքում Հանձնաժողովը, լիցենզավորված անձի դիմումի համաձայն, համապատասխան որոշմամբ կամ գրությամբ երաշխիք տված անձին ազատում է երաշխիքային պարտավորություններից:

2. ԵՐԱՇԽԻՔՈՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

6. Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ Արցախի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե՝

1) Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին.

2) արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված վերակառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի վերակառուցման աշխատանքները և չի դիմել լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար, կամ Հանձնաժողովը մերժել է փոփոխություններ կատարելու դիմումը, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև վերակառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

3) արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված վերակառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի վերակառուցման աշխատանքները և չի դիմել լիցենզիայով սահմանված վերակառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով, կամ Հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև վերակառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

7. Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Արցախի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե՝

1) Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին.

2) արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Հանձնաժողովի հաստատած էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է:

8. Սույն կարգի 7-րդ կետում սահմանված դեպքերում՝ Հանձնաժողովի որոշմամբ կամ գրությամբ սահմանված ժամկետում, լիցենզավորված անձը Հանձնաժողով է ներկայացնում սույն կարգի 3-րդ կետին համապատասխան հաշվարկված երաշխիք:

9. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված որոշման ընդունման դեպքում, երբ լիցենզավորված անձի կողմից նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, սույն կարգի 6-րդ կետով նախատեսված գումարի՝ Արցախի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունը կրում է լիցենզավորված անձը:

3. ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

10. Լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը սույն կարգով սահմանված դեպքերում Արցախի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Սույն կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է

(հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.

2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախագուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.

3) լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրագեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրագեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Սույն կարգի իմաստով, մասնավորապես, ֆորս մաժոր են՝

1) բնական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները.

2) ապստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումները, զինված հակամարտությունները, արտաքին թշնամու գործողությունները կամ շրջափակումը, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Արցախի Հանրապետության տարածքում կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, երկարաձգվել սույն լիցենզիայով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ լիցենզավորված անձը գործել է համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության:

12. Սույն կարգի 11-րդ կետը չի սահմանափակում լիցենզավորված անձի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմելու Հանձնաժողով՝ սույն գլխի պահանջներին բավարարելու դեպքում դրանք ևս ֆորս մաժոր ճանաչելու համար:

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

**ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
(կառուցման ժամանակահատվածի համար)**

(վաստաթղթի կազմը և բովանդակությունը)

Կառուցվող օբյեկտի անվանումը

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Կառուցման նպատակը և սպասվող տնտեսական, սոցիալական և առևտրային արդյունքը:
- Կառուցվող օբյեկտի ընդհանուր բնութագիրը և տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշները:
- Տեղեկություններ շինմոնտաժային ծառայությունների շուկայի, հիմնական սարքավորումներ արտադրողների (առաքողների) և դրանց արժեքների մասին:
- Տեղեկություններ տեղադրվող զենեքատորների, տուրբինների և սարքավորումների մակնիշների և հզորության վերաբերյալ:

2. ՇՈՒԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

- Արտադրանքի (ծառայության) իրացման հնարավորությունները:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

- Արտադրության (ծառայության) տեխնոլոգիայի և հիմնական տեխնոլոգիական սարքավորումների ընտրության տեխնիկական և տնտեսական հիմնավորումը:
- Ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով օբյեկտի տեխնիկատնտեսական ցուցանիշների համալիր վերլուծության արդյունքներով օպտիմալ տարբերակի ընտրության հիմնավորումը:

4. ՕԲՅԵԿՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ) ՏԱՐԱԾՔԸ

- Օբյեկտի տեղաբաշխման հիմնավորումը:
- Քարտեզագրական և այլ նյութեր, այդ թվում՝ կառուցվող օբյեկտի տեղաբաշխման սխեման, որի վրա նշված են տրանսպորտային հաղորդակցության ուղիներին և ճարտարագիտական ցանցերին միացման կետերը, օբյեկտի հատակագիծը:

5. ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

- Օբյեկտի շինությունների և կառույցների հիմնական բնութագրերը:
- Կառուցման ժամանակացույցը՝ ըստ փուլերի:
- Նախնական լուծումներ օբյեկտի էներգամատակարարման (սնման), ջրամատակարարման, կոյուղու և այլնի վերաբերյալ:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՕՔՅԵԿՏԻ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- 13. Օբյեկտի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:
- 14. Նախնական բնապահպանական լուծումներ:

7. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

- 15. Կառուցման աշխատանքների արժեքը բացված տեսքով:
- 16. Ֆինանսավորման հնարավոր աղբյուրները և ֆինանսավորման պայմանները:
- 17. Հիմնական արտադրանքի ինքնարժեքի հաշվարկը:
- 18. Օբյեկտի նախագծման, կառուցման և նախագծային հզորությամբ գործարկման ժամկետները:
- 19. Ներդրումների արդյունավետության գնահատման ցուցանիշների (շահութաբերության ներքին նորմա, մաքուր բերված արժեք, հետզնման ժամկետ և այլն) հիման վրա կառուցվող օբյեկտի համար լավագույն տեխնիկատնտեսական ցուցանիշների ընտրություն:
- 20. Անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

Հավելված N 5
Էներգետիկայի բնագավառում
գործունեության լիցենզավորման կարգի

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

(Լիցենզավորվող անձի անվանումը (անունը, ազգանունը))

մտադիր է դիմել Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով՝

(գործունեության վայրը (աշխարհագրական տարածքը))

(լիցենզավորվող գործունեության տեսակը)

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

(Լիցենզավորվող անձի գտնվելու (բնակության) վայրը, հեռախոսը, էլեկտրոնային փոստի հասցեն)

Հավելված N 6
Էներգետիկայի բնագավառում
գործունեության լիցենզավորման կարգի

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՄՏԱՑՄԱՆ ԿՏՐՈՆ

1. Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի

20__ թվականի _____ «_____»-ի N____ -Ա որոշում

2. Լիցենզավորված գործունեության տեսակը

3. Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը «__» _____ 20__ թվական

4. Լիցենզիայի համարը ԼԷ N_____

5. Ստացված էջերի քանակը` _____

6. Լիցենզավորված անձի անվանումը (անունը, ազգանունը)

7. Լիցենզիա ստացող անձի անունը, ազգանունը, անձնագրի կամ այն փոխարինող փաստաթղթի սերիան և համարը, ում կողմից և երբ է տրված

8. Լիցենզիան ստացվել է` «__» _____ 20__ թվական

9. Լիցենզիա ստացողի ստորագրությունը _____»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» հուլիսի 2019 թվականի

N 52-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
26-Ի N 18-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մարտի 18-ի թիվ 14Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 18-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի՝

1) 1-ին կետի 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) արևային էլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև 5 մեգավատտ (ներառյալ) տեղակայված հզորություն և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2019 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ժամանակահատվածում.

5) հողմային էլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև 30 մեգավատտ (ներառյալ) տեղակայված հզորություն և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2019 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ժամանակահատվածում.

6) կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայաններ, որոնք էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում.».

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն մեթոդիկայի 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինն առաջին անգամ սահմանվում է՝

1) սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը 2019 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը ժամանակահատվածում ընդունվելու դեպքում՝ բնական ջրահոսքի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինն հավասար.

2) սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը 2020 թվականի հուլիսի 1-ից հետո ընդունվելու դեպքում՝ 2020 թվականի հուլիսի 1-ից հետո տվյալ տեսակի կայանի լիցենզիա ստացող անձանց համար սահմանված սակագնային կարգավորման համաձայն:».

3) 4-րդ կետում՝

ա. «K1» գործակիցը սահմանող պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«K1-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման՝ սղաճի տեմպով պայմանավորված և փոքր հիդրոէլեկտրակայանների, կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանների համար ընդունվում է հավասար 0,35-ի, իսկ 2019 թվականի օգոստոսի 1-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած արևային և հողմային էլեկտրակայանների համար՝ 0,1.».

բ. «K2» գործակիցը սահմանող պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«K2-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին ամսական փոխարժեքի փոփոխմամբ պայմանավորված և փոքր հիդրոէլեկտրակայանների, կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանների համար ընդունվում է հավասար 0,65-ի, իսկ 2019 թվականի օգոստոսի 1-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած արևային և հողմային էլեկտրակայանների համար՝ 0,9.».

4) 6-րդ կետում «առաջին» բառից հետո լրացնել «կամ կայանի տեսակի փոփոխությամբ պայմանավորված սակագնի վերանայման վերաբերյալ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2019 թվականի հուլիսի 31-ի

**ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 200 ՀՐԱՄԱՆԸ
ՈՒժԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 90-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» օրենքի 40-րդ հոդվածի երրորդ մասով
և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել վավերացման մակագրությունների օրինակելի ձևերը՝ համաձայն
հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարի 2005 թվականի հոկտեմբերի 3-ի «Վավերացման
մակագրությունների օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 200 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից, բացառությամբ սույն հրամանի հավելվածի N 59 ձևի, որն ուժի մեջ
կմտնի 2021 թվականի հունվարի մեկին:

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

2019 թվականի հուլիսի 31
ք. Ստեփանակերտ

ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

1. Վավերացման ենթակա նոտարական գործողություններ կատարելիս նոտարը վավերացվող յուրաքանչյուր փաստաթղթի վրա կատարում է համապատասխան վավերացման մակագրություն, որում մասնավորապես նշվում են նոտարի անունը, ազգանունը, նոտարական տարածքը, կատարվող նոտարական գործողության տեսակը, կատարման տարին, ամիսը, օրը (բառերով), գրանցամատյանում համապատասխան գրանցման համարը, գանձված պետական տուրքի և ծառայության վճարի չափը, նոտարի հայտարարությունն այն մասին, որ նոտարական գործողության մասնակիցների ինքնությունը, իրավունակությունը կամ գործունակությունն ստուգված են, ինչպես նաև օրենքին չհակասող այլ դրույթներ:

2. Օտար լեզվով վավերացվող փաստաթղթերի վրա վավերացման մակագրությունները կարող են կատարվել համապատասխան լեզվով:

3. Նոտարական գրասենյակից դուրս կատարվող նոտարական գործողությունների, վավերացման մակագրության մեջ պետք է նշվի նոտարական գործողությունների կատարման վայրը /հասցե/:

4. Նոտարական ակտի կրկնօրինակ տալու դեպքում նշում է կատարվում, որ այն կրկնօրինակ է:

Ձև N 1

Ըստ օրենքի ժառանգության
իրավունքի վկայագիր, որը
տրվում է բոլոր ժառանգներին

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ըստ օրենքի ժառանգության իրավունքի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____
ամսաթիվ, ամիս, տարեթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար _____
նոտարական տարածքի անվանումը ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն,
քաղ. _____ մահացած
ժառանգատուի ա. հ. ա. լրիվ

_____ թվականի _____ ի _____ ին, գույքի նկատմամբ հավասար բաժիններով

ժառանգներ են համարվում _____
ժառանգների ա. հ. ա. լրիվ

բնակության վայրերը, ժառանգատուի հետ նրանց ազգակցական կապերը

Ժառանգական գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը, բաղկացած է՝

Գրանցված է գրանցամատյան թիվ -----ով
Գանձված է պետական տուրք ----- և ծառայության վճար ----- համաձայն՝
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

(ժառանգական գործի համարը)

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____

ստորագրություն

Ձև 2

Ըստ ներկայացման իրավունքի
ժառանգության իրավունքի վկայագիր

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ըստ օրենքի ժառանգության իրավունքի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____
տարեթիվ, ամիս, ամսաթիվ բառերով

Ես, _____ նոտար _____
նոտարական տարածքի անվանումը ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն,
քաղ. _____-ի մահացած
ժառանգատուի ա. հ. ա. լրիվ

_____ թվականի _____- ին, գույքի նկատմամբ ժառանգ է համարվում
ժառանգի ա. հ. ա. լրիվ և բնակության վայրը

_____ ժառանգատուի հետ նրա ազգակցական կապը
որի հայրը (մայրը), քաղ. _____

_____ ժառանգի մահացած ծնողի ա. հ. ա. լրիվ

մահացել է _____ թվականի _____-ի _____-ին:
Ժառանգական գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը, բաղկացած է՝

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով
Գանձված է պետական տուրք -----և ծառայության վճար----- համաձայն՝
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

(ժառանգական գործի համարը)

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____
ստորագրություն

Մահացած, ժառանգությունը ընդունել
չհասցրած ժառանգի գույքի ըստ օրենքի
ժառանգության իրավունքի վկայագիր

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ըստ օրենքի ժառանգության իրավունքի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____

տարեթիվ, ամիս, ամսաթիվ բառերով

Ես, _____ հաստատում եմ, որ

ա. հ. ա. լրիվ

քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն,

քաղ. _____ մահացած

ժառանգատուի ա. հ. ա. լրիվ

_____ թվականի _____-ի _____ -ին, գույքի նկատմամբ ժառանգ է համարվել

քաղ. _____

ժառանգի ա. հ. ա. լրիվ և բնակության վայրը

ժառանգատուի հետ նրա ազգակցական կապը

սակայն _____ թվականի _____-ի _____-ին նրա մահվան պատճառով ժառանգությունն
անցնում է նրա _____

ժառանգի ա. հ. ա

բնակության վայրը և ժառանգատուի հետ նրա ազգակցական կապը

Ժառանգական գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը, բաղկացած է՝

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով

Գանձված է պետական տուրք ----- և ծառայության վճար ----- համաձայն՝

«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

(ժառանգական գործի համարը)

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____

ստորագրություն

Մահացած, ժառանգությունն ստացած,
բայց իր ժառանգական իրավունքները
չձևակերպած ժառանգի՝ ըստ օրենքի
ժառանգության իրավունքի վկայագիր

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐՐ

Ըստ օրենքի ժառանգության իրավունքի

Վ Կ Ա ՑԱԳԻՐ

ԼՂՀ քաղաք _____

տարեթիվ, ամիս, ամսաթիվ բառերով

Ես, _____ նոտար _____

նոտարական տարածքի անվանումը

ա.հ.ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն,
քաղ. _____ մահացած

ժառանգատուի ա.հ.ա. լրիվ

_____ թվականի _____-ի _____ -ին, գույքի ժառանգ է համարվում
քաղ. _____

ժառանգատուի ա.հ.ա. լրիվ

բնակության վայրը, ժառանգատուի հետ նրա ազգակցական կապը

ժառանգատուի գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը, բաղկացած է՝

գույքի անվանումը

որը պատկանել է քաղ _____

ա.հ.ա. լրիվ և ժառանգատուի

հետ ազգակցական կապը

մահացած _____ թվականի _____-ի _____-ին, որի ժառանգն է եղել
քաղ. _____

ա.հ.ա. լրիվ և ժառանգատուի հետ ազգակցական կապը

իրավունքները:

որն ընդունել է ժառանգությունը, բայց չի ձևակերպել իր ժառանգական

Գրանցված է գրանցամատյան թիվ -----ով

Գանձված է պետականտուրք ----- և ծառայության վճար ----- համաձայն՝
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

(ժառանգական գործի համարը)

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____

ստորագրություն

1. Եթե ժառանգական իրավունքի վկայագիրը տրվում է միաժամանակ ժառանգատուին
պատկանող գույքի և ժառանգությամբ ընդունված, բայց նրա կողմից չձևակերպված գույքի
համար, ապա վկայագրում ցույց է տրվում կոնկրետ գույքը՝ նշելով, թե ում է այն պատկանում:

Ձև N 5

Ժառանգության իրավունքի վկայագիր,
երբ ժառանգը հրաժարվել է իր
ժառանգությունից՝ հոգուտ այլ ժառանգի

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ըստ օրենքի ժառանգության իրավունքի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____

տարեթիվ, ամիս, ամսաթիվ բառերով

Ես, _____ նոտար _____

նոտարական տարածքի անվանումը

ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն,
քաղ. _____ մահացած

ժառանգատուի ա. հ. ա. լրիվ

_____ թվականի _____-ի _____ - ին, գույքի ժառանգներն են համարվել

ժառանգների ա. հ. ա. լրիվ

բնակության վայրերը, ժառանգատուի հետ նրանց ազգակցական կապը

և ժառանգական գույքի բաժինները, այդ թվում այն բաժինը,

որից նրանք հրաժարվել են հոգուտ այլ ժառանգների: Ժառանգատուի գույքը, որի
համար տրված է սույն վկայագիրը, բաղկացած է՝

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով

Գանձված է պետական տուրք -----և ծառայության վճար----- համաձայն՝

«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

(ժառանգական գործի համարը)

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____

ստորագրություն

1. Եթե ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է միաժամանակ մի քանի ժառանգների, որոնցից ոմանք կենդանի են, իսկ մյուսները մահացել են, չհասցնելով ժառանգությունն ընդունել, ապա տեքստում «հաստատում եմ» բառից հետո նշվում է, որ քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածների համաձայն _____

ժառանգատուի ա.ա.հ. լրիվ

մահացած _____ թվականի _____-ին, գույքի ժառանգներն են համարվում յուրաքանչյուրը մեկ երրորդ բաժնով՝ կինը _____ որն ապրում է _____

նրա բնակության վայրը

երեխան _____

ա. հ. ա. լրիվ

որն ապրում է _____ և մեկ երրորդ բաժնով ժառանգ է հանդիսացել

նրա բնակության վայրը

երեխան _____, սակայն _____ թվականի

ա. հ. ա. լրիվ

_____ -ի _____ -ին նրա մահվան պատճառով ժառանգության հիշյալ բաժինը հավասար բաժիններով անցնում է նրա ամուսնուն _____

ա. հ. ա. լրիվ, բնակության վայրը

և երեխան _____ :

ա. հ. ա., բնակության վայրը

Ժառանգական գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը, բաղկացած է՝

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով

Գանձված է պետական տուրք ----- և ծառայության վճար----- համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

(ժառանգական գործի համարը)

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____

ստորագրություն

Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, որը տրվում է այն դեպքերում, երբ մի քանի ժառանգների բաժինները բաց են մնում

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ըստ օրենքի ժառանգության իրավունքի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____ տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար _____ նոտարական տարածքի անվանումը _____ ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն, քաղ. _____ մահացած _____ ժառանգատուի ա. հ. ա. լրիվ

_____ թվականի _____ - ի _____ - ին, գույքի ժառանգներ են համարվում յուրաքանչյուրը՝ _____ բաժնի չափը

_____ ա. հ. ա. լրիվ, բնակության վայրերը և ժառանգատուի հետ ազգակցական կապը

Ժառանգական գույքը, որի համար հիշյալ բաժիններով տրված է սույն վկայագիրը, բաղկացած է _____

Հիշյալ ժառանգական գույքի _____ բաժնի համար _____ բաժնի չափը

ժառանգության իրավունքի վկայագիր դեռևս չի տրված:

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով
Գանձված է պետական տուրք -----և ծառայության վճար----- համաձայն՝
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

_____ (ժառանգական գործի համարը)

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____ ստորագրություն

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ըստ օրենքի ժառանգության իրավունքի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____
տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար _____
նոտարական տարածքի անվանումը ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն,
քաղ. _____ մահացած
ժառանգատուի ա. հ. ա. լրիվ

_____ թվականի _____ - ի _____ - ին, գույքի բաժնով ժառանգ է համարվում
ժառանգի ա. հ. ա. լրիվ,

բնականության վայրը, ժառանգատուի հետ նրանց ազգակցական կապը

Ժառանգական գույքը, որի համար հիշյալ բաժնով տրված է սույն վկայագիրը,
բաղկացած է _____
գույքի անվանումը, որի համար տրվում է վկայագիրը

Հիշյալ ժառանգական գույքի _____ բաժնի համար
բաժնի չափը

Ժառանգության իրավունքի վկայագիր դեռևս չի տրված:

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով
Գանձված է պետական տուրք -----և ծառայության վճար----- համաձայն՝
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

(ժառանգական գործի համարը)

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____
ստորագրություն

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Անժառանգ գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____
տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար _____
նոտարական տարածքի անվանումը ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն
քաղ. _____ մահացած
ժառանգատուի ա. հ. ա. լրիվ

_____ թվականի _____ -ի _____ - ին, գույքը ճանաչվել է անժառանգ և ըստ
ժառանգության այն անցնում է _____ համայնքին՝ ի դեմս _____
: _____
համայնքի լիազոր ներկայացուցչի անվանումը

Ժառանգական գույքը, որի համար հիշյալ բաժիններով տրված է սույն վկայագիրը
բաղկացած է՝ _____

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով
Գանձված է պետական տուրք ----- և ծառայության վճար----- համաձայն՝
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

(ժառանգական գործի համարը)

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____
ստորագրություն

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ըստ կտակի ժառանգության իրավունքի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____
տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար _____
նոտարական տարածքի անվանումը ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղ. _____ - ի կողմից
ա. հ. ա. լրիվ

_____ թվականի _____ - ին հաստատված և _____
կտակը հաստատած նոտարական տարածքի անվանումը

գրանցամատյանում թիվ _____ ով գրանցված կտակի համաձայն,
քաղ. _____,
կտակարարի ա. հ. ա. լրիվ, բնակության վայրը

մահացած _____ թվականի _____ -ին, կտակում ցույց տրված գույքի ժառանգներ
են համարվում _____
ժառանգների ա. հ. ա. լրիվ

_____ և նրանց բնակության վայրերը

Ժառանգական գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը բաղկացած է՝

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով
Գանձված է պետական տուրք -----և ծառայության վճար ----- համաձայն՝
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

(ժառանգական գործի համարը)

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____
ստորագրություն

Ձև N 10

Ընդհանուր համատեղ գույքի մեջ բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր, որը տրվում է նրանց դիմումով

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐՐ

Սեփականության իրավունքի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____ տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար _____ անտարական տարածքի անվանումը ա. հ. ա. լրիվ

քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն և քաղ. դիմումի համաձայն հաստատում եմ, որ _____ դիմողների ա. հ. ա. լրիվ

և նրանց բնակության վայրերը

դիմողներին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի սեփականության իրավունքը պատկանում է _____

ցույց տալ, թե համասեփականատերերից որին ընդհանուր գույքի մեջ որ

բաժինն է պատկանում

Հիշյալ համասեփականատերերի ընդհանուր համատեղ սեփականությունը, որի նկատմամբ նրանցից յուրաքանչյուրի սեփականության իրավունքը հաստատվում է նշված բաժիններով, բաղկացած է _____

գույքի անվանումը, որի համար

սեփականության իրավունքի վկայագիր է

տրված, ում անվամբ է այն նախկինում գրանցված եղել կամ ու՞մն է համարվել

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով

Գանձված է պետական տուրք ----- և ծառայության վճար ----- համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____ ստորագրություն

Ձև N 11

Ընդհանուր գույքի մեջ բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր, որը տրվում է կենդանի մնացած սեփականատիրոջը

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Սեփականության իրավունքի

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____

տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար _____

նոտարական տարածքի անվանումը

ա. հ. ա. լրիվ

քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն հաստատում եմ, որ քաղաքացի _____

կենդանի մնացած սեփականատիրոջ ա. հ. ա. լրիվ

նրա բնականության վայրը

որը մահացած համասեփականատիրոջ _____

մահացած համասեփականատիրոջ ա. հ. ա. լրիվ

մահացած _____ թվականի, _____ - ին, հետ համատեղ համարվում է _____

գույքի անվանումը, տեսակը, գտնվելու վայրը

համասեփականատեր և ունի այդ գույքի _____ բաժնի նկատմամբ սեփականության իրավունք:

Ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի նշված բաժնի սեփականության իրավունքը սույն վկայագրով հաստատվում է քաղ. _____

կենդանի մնացած համասեփականատիրոջ ա. հ. ա. լրիվ

համար, բաղկացած է _____

գույքի անվանումը, որի բաժնի սեփ. իրավունքը հաստատվում է

Գրանցված է գրանցամատյան թիվ -----ով

Գանձված է պետական տուրք ----- և ծառայության վճար ----- համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____

ստորագրություն

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____
անսաթիվ, ամիս, տարեթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար _____
նոտարական տարածքի անվանումը ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղ. _____
ա. հ. ա. լրիվ

ծնված _____ ողջ է և ապրում է
ծննդյան տարի, ամիս, օր, վայր

_____ նրա բնակության վայրը

Քաղ. _____ հիշյալ նոտարական տարածք
ներկայացածի ա. հ. ա. լրիվ

անձամբ ներկայացել է 20 _____ թ _____ ժամը _____ ըոպեին:

Նրա ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով
Գանձված է պետական տուրք -----և ծառայության վճար----- համաձայն՝
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____
ստորագրություն

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐՈՂ

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____
տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար՝ _____
նոտարական տարածքի անվանումը ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղ. _____
ա. հ. ա. լրիվ

ծնված _____ ողջ է և ապրում է
ծննդյան տարի, ամիս, օր, վայրը

_____ նրա բնակության վայրը

Քաղ. _____ ներկայացել է
անչափահասի ա. հ. ա. լրիվ

20 _____ թ _____ ժամը _____ ըոպեին՝ քաղ. _____
ա. հ. ա. լրիվ

ուղեկցությամբ, որը հանդիսանում է քաղ. _____-ի
անչափահասի ա. հ. ա. լրիվ

_____ հայրը, մայրը, խնամակալը

Վկայականում հիշված քաղաքացիների ինքնությունը և գործունակությունը ստուգված
են:

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով

Գանձված է պետական տուրք-----և ծառայության վճար-----

համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____
ստորագրություն

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐՐ

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____

տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար՝ _____

նոտարական տարածքի անվանումը

ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղ. _____

բնակության վայրը

" _____ " _____ թվականի ժամը _____ — ընդհանուր գտնվում էր նշված

նոտարական տարածքի շենքում (այլ վայրում) _____

որի հասցեն է _____

նոտարական տարածքի հասցեն

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով

Գանձված է պետական տուրք -----և ծառայության վճար ----- համաձայն՝

«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____

ստորագրություն

Վկայագիր լուսանկարում պատկերված անձի հետ քաղաքացու նույնությունը հաստատելու մասին

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐՐ

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____ տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար՝ _____ նոտարական տարածքի անվանումը _____ ա. հ.ա. լրիվ

հաստատում եմ, որ սույն լուսանկարում պատկերված անձը նույնական է այն ներկայացրած քաղ. _____ լուսանկարը ներկայացնողի ա. հ. ա. լրիվ _____

նրա բնակության վայրը

Լուսանկարը ներկայացրած անձի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ -----ով
Գանձված է պետական տուրք-----և ծառայության վճար----- համաձայն՝
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____ ստորագրություն

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐՈՒ

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____

տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար՝ _____

նոտարական տարածքի անվանումը

ա. հ. ա. լրիվ

հաստատում եմ, որ քաղ. _____

ա. հ. ա. լրիվ

_____ որն ապրում է _____

բնակության վայրը

_____ թվականի _____ -ին

նոտարական տարածքին, որը գտնվում է _____

նոտարական տարածքի հասցեն

նշվում է ժամկետը՝ բառերով

Ժամկետով պահպանման հանձնեց փաստաթղթերը, համաձայն առդիր ցանկի կամ փաթեթի:

Փաստաթղթերը պահպանման հանձնած անձի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ-----ով

Գանձված է պետական տուրք -----և ծառայության վճար----- համաձայն՝
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____

ստորագրություն

Ձև N 17

Վկայագիր դիմումը, հայտարարությունը կամ այլ փաստաթղթերը հանձնելու մասին

ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ԼՂՀ քաղաք _____

տարեթիվ, ամիս, ամսաթիվ՝ բառերով

Ես, _____ նոտար՝ _____

նոտարական տարածքի անվանումը

ա. հ. ա. լրիվ

քաղաքացիական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն, հաստատում եմ, որ _____

հայտարարություն տված քաղաքացու ա. հ. ա. լրիվ

իրավաբանական անձի անվանումը

դիմումը, հայտարարությունը և այլ փաստաթուղթը իմ կողմից _____ թվականի _____ - ին հանձնված է

քաղաքացու ա. հ. ա. լրիվ, կամ իրավաբանական անձի անվանումը,

որոնց հանձնված է հայտարարությունը

Դիմում, հայտարարություն կամ այլ փաստաթուղթ հանձնող քաղաքացու (ներկայացուցչի) ինքնությունը և գործունակությունը, նաև լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ -----ով

Գանձված է պետական տուրք ----- և ծառայության վճար ----- համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար՝ _____

ստորագրություն

Ձև N 18

Վավերացման մակագրություն կնքված պայմանագրի վրա

« _____ » _____ թվականին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ _____ նոտարական տարածքի նոտար _____ իս կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ _____ ով

Գանձված է պետական տուրք _____ և ծառայության վճար _____ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար՝ _____ *Զինանշանի պատկերով կնիք*

Ձև N 19

*Վավերացման մակագրություն
պայմանագրի վրա՝ իրավաբանական
անձի մասնակցությամբ*

« _____ » _____ թվականին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝
_____ նոտարական տարածքի նոտար _____ իս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագրի կողմերի
ինքնությունը և գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի
իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ _____ ով
Գանձված է պետական տուրք _____ և ծառայության վճար _____
համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար՝ _____ *Ձինանշանի պատկերով կնիք*

Ձև N 20

*Վավերացման մակագրություն՝
պայմանագրի վրա՝ ներկայացուցչի/
մինչև 14 տարեկան անչափահասի
մասնակցությամբ*

« _____ » _____ թվականին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝
_____ նոտարական տարածքի նոտար _____ իս կողմից:
Պայմանագիրը ստորագրվել է իմ ներկայությամբ: Պայմանագրի կողմերի
/ներկայացուցչի/ ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի
լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ _____ ով
Գանձված է պետական տուրք _____ և ծառայության վճար _____
համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար՝ _____ *Ձինանշանի պատկերով կնիք*

Ձև N 21

Վավերացման մակագրություն պայմանագրի վրա՝ անչափահասի (14-ից մինչև 18 տարեկան) մասնակցությամբ, ով գործում է ծնողների (որդեգրողների, հոգաբարձուի) համաձայնությամբ

« _____ » _____ թվականին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ _____ նոտարական տարածքի նոտար _____ իս կողմից:
Պայմանագիրը ստորագրվել է իմ ներկայությամբ _____ ի և անչափահաս _____ ի կողմից, ով գործում է _____ ի համաձայնությամբ:
Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:
Անչափահասի ծնողների (որդեգրողների, հոգաբարձուի) ինքնությունը, գործունակությունը և լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ _____ ով
Գանձված է պետական տուրք _____ և ծառայության վճար _____
համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար՝ _____ *Ջինանշանի պատկերով կնիք*

Ձև N 22

Վավերացման մակագրություն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման մասին անձանց միջև կնքված պայմանագրի վրա

« _____ » _____ թվականին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ _____ նոտարական տարածքի նոտար _____ իս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ _____ ի _____ իրավունք(ներ)ը ստուգված են:
Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի վարչությունում:

Գրանցված է գրանցամատյան թիվ _____ ով
Գանձված է պետական տուրք _____ և ծառայության վճար _____
համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար՝ _____ *Ջինանշանի պատկերով կնիք*

Ձև N 23

Վավերացման մակագրություն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարեցման մասին պայմանագրի վրա՝ իրավաբանական անձի մասնակցությամբ

« _____ » _____ թվականին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ _____ նոտարական տարածքի նոտար _____ իս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ _____ ի _____ իրավունք(ներ)ը ստուգված են:
Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի վարչությունում:

Գրանցված է գրանցամատյան թիվ _____ ով
Գանձված է պետական տուրք _____ և ծառայության վճար _____ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար՝ _____ *Զինանշանի պատկերով կնիք*

Ձև N 24

Վավերացման մակագրություն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարեցման մասին պայմանագրի վրա՝ ներկայացուցչի ներկայությամբ

« _____ » _____ թվականին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ _____ նոտարական տարածքի նոտար _____ իս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի(ների) լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ _____ ի _____ իրավունք(ներ)ը ստուգված են:
17. Ընդամենը ԱԱՀ-ի կրեդիտ $[U]=[6.U]-[7.1U]+[7.2U]+[8.U]-[8.F]+[11.U]+[12.U]+[13.U]+[14.U]$ ՝ ըստ համապատասխան եռամսյակների $[F]=[6.F]-[7.1F]+[7.2F]+[8.F]+[9.F]-[10.1F]+[10.2F]+[15.F]-[16.F]$ ՝ ըստ համապատասխան եռամսյակների		[U]. Հարկման բազա	[F]. ԱԱՀ կրեդիտ	[U]. Հարկման բազա	[F]. ԱԱՀ կրեդիտ
ԱԱՀ-ի դեբետ		[U]. Արժեք	[F]. ԱԱՀ դեբետ	[U]. Արժեք	[F]. ԱԱՀ դեբետ
18. Արցախի Հանրապետության տարածք Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ներմուծված ապրանքների					
19. Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների ու ծառայությունների					
20. Արցախի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների					
21. Ձեռքբերումների վերաբերող ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների		X	X	X	X
1) նվազեցում					
2) ավելացում					
22. Ձեռք բերված ապրանքների մասով դեբետի հետաձգում (գումարը)		X		X	
23. Հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարի ճշգրտման ընդհանուր գումարը, այդ թվում՝ ըստ ճշգրտման հիմքերի		[U]. Ավելացում	[F]. Պակասեցում	[U]. Ավելացում	[F]. Պակասեցում
1) Օրենքի հոդվածի համարը	2) Օրենքի հոդվածի կետի համարը	X	X	X	X
24. Ընդամենը ԱԱՀ-ի դեբետ $[18.F]+[19.F]+[20.F]-[21.1F]+[21.2F]-[22.F]+[23.U]-[23.F]$ ՝ ըստ համապատասխան եռամսյակների Եթե գործողության արդյունքը՝ 1) հավասար է 0-ի՝ [U] և [F] վանդակներում լրացվում է «0». 2) դրական է՝ լրացվում է [U] վանդակը.		[U]. դրական	[F]. բացասական	[U]. դրական	[F]. բացասական

3) բացասական է՝ լրացվում է [Բ] վանդակը				
25. Ներմուծված այն ապրանքների, որոնց մասով Օրենքի 6.1-ին հոդվածի համաձայն առաջանում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար	[Ա]. Հարկման բազա	[Բ]. Հաշվարկ- ված ԱԱՀ գումար	[Ա]. Հարկման բազա	[Բ]. Հաշվարկ- ված ԱԱՀ գումար
26. Տվյալ կիսամյակի (ըստ եռամսյակների) համար հաշվարկված ԱԱՀ 1) եթե լրացված է [24.Ա] վանդակը՝ ապա ([17.Բ] - [24.Ա]). 2) եթե լրացված է [24.Բ] վանդակը՝ ապա ([17.Բ] + [24.Բ]). 3) եթե [24.Ա] և [24.Բ] վանդակներում լրացված են «0»՝ ապա ([17.Բ]): Եթե սվյալ գործողության արդյունքը դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, եթե բացասական՝ լրացվում է [Բ] վանդակը, եթե հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»	[Ա]. Ենթակա է բյուջե վճարման (կրեդիտ)	[Բ]. Ենթակա է հաշվանց- ման (դեբետ)	[Ա]. Են- թակա է բյուջե վճարման (կրեդիտ)	[Բ]. Ենթակա է հաշ- վանցման (դեբետ)

Անհատ ձեռնարկատեր _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում հաշվարկը լրացվում է երկու օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է անհատ ձեռնարկատիրոջը:

Կ Ա Ր Գ
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ
(կիսամյակային հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող
անհատ ձեռնարկատիրոջ համար)

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. Ավելացված արժեքի հարկի հաշվարկի ձևը (այսուհետ՝ հաշվարկ) ներկայացվում է հարկային մարմնին «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածին համապատասխան:
2. Հաշվարկի ճշտումները կատարվում են Օրենքի 33-րդ հոդվածին համապատասխան:
3. Հաշվարկում արժեքային մեծությունները լրացվում են հազար դրամներով՝ ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ: Հաշվարկի վանդակներում արժեքային մեծության բացակայության դեպքում հաշվարկի այդ վանդակներն ընդունվում են «0» (զրո):
4. Հաշվարկի 1-ին կետը լրացվում է հարկային մարմնի կողմից:
5. Հաշվարկի 2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):
6. Հաշվարկի 3-րդ կետում լրացվում է անհատ ձեռնարկատեր համարվող ֆիզիկական անձի անունը, ազգանունը:
7. Հաշվարկի 4-րդ կետում լրացվում է անհատ ձեռնարկատեր համարվող ֆիզիկական անձի բնակության վայրը:
8. Հաշվարկի 5-րդ կետում լրացվում են այն տարիներն ու կիսամյակը, որի համար ներկայացվում է հաշվարկը:

2. ՀԱՇՎԱՐԿԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Հաշվարկի 6-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) 20 տոկոս դրույքաչափով հարկվող գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

10. Հաշվարկի 7-րդ կետում լրացվում են Օրենքի 18-րդ հոդվածով սահմանված դեպքերում տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով (բացառությամբ՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում մատակարարի անունից (Օրենքի 18-րդ հոդվածի վեցերորդ պարբերություն) դուրս գրված հարկային հաշիվներով) գործարքների հարկման բազան և հաշվարկված ԱԱՀ-ի գումարը: Հաշվարկի 7-րդ կետի՝

1) 1-ին ենթակետի [Ա] վանդակում լրացվում է Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 1-ին կետով սահմանված դեպքում՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով (բացառությամբ՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում մատակարարի անունից (Օրենքի 18-րդ հոդվածի վեցերորդ պարբերություն) դուրս գրված հարկային հաշիվներով) գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

2) 2-րդ ենթակետի [Ա] վանդակում լրացվում է Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 2-րդ կետով սահմանված դեպքում՝ դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով (բացառությամբ՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում մատակարարի անունից (Օրենքի 18-րդ հոդվածի վեցերորդ պարբերություն) դուրս գրված հարկային հաշիվներով) գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

11. Հաշվարկի 8-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դիմաց ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման ընդհանուր գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), իսկ հաշվարկի 8-րդ կետի [Բ] վանդակում՝ ԱԱՀ-ի գումարը, որը որոշվում է ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման գումարի նկատմամբ կիրառելով 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափ:

12. Հաշվարկի 9-րդ կետում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) ԱԱՀ-ի գծով այլ հարկային պարտավորության ընդհանուր գումարը, այդ թվում՝

1) հաշվարկի 11-րդ և 12-րդ կետերում նշված գործարքների հետ չկապված պարտավորությունների գումարները (մասնավորապես՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում առաջացած պարտավորության գումարը):

2) Օրենքի 19-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների խախտմամբ դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները:

3) ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման անհատույց (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ) գործարքներից Օրենքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ի գումարները:

13. Հաշվարկի 10-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 1-ին կետով սահմանված դեպքում տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան մատակարարի անունից դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (ԱԱՀ-ի նվազեցում), իսկ հաշվարկի 10-րդ կետի 2-րդ ենթակետում՝ Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 2-րդ կետով սահմանված դեպքում Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան մատակարարի անունից դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (ԱԱՀ-ի ավելացում):

14. Հաշվարկի 11-րդ կետում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով գործարքների հարկման բազան: Ընդ որում, հաշվարկի 11-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված սյունակներում՝ ըստ առանձին տողերի լրացվում են Օրենքի այն հոդվածի և կետի համարները, որոնց համաձայն այդ գործարքները համարվում են ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներ, իսկ համապատասխան տողի [Ա] վանդակում լրացվում է այդ գործարքների հարկման բազան:

15. Հաշվարկի 12-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) Օրենքի 15-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ից ազատված, Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ չհամարվող (բացառությամբ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետում նշված) գործարքների ու գործառնությունների, ինչպես նաև միջազգային համաձայնագրերով կամ այլ օրենքներով ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ից ազատման արտոնություն սահմանված լինելու դեպքում այդ գործարքների ու գործառնությունների հարկման բազան: Հաշվարկի 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված սյունակներում՝ ըստ առանձին տողերի լրացվում են Օրենքի այն հոդվածի և կետի համարները, որոնց համաձայն այդ գործարքները (գործառնությունները) համարվում են ԱԱՀ-ից ազատված, հարկվող օբյեկտ չհամարվող գործարքներ կամ գործառնություններ, իսկ համապատասխան տողի [Ա] վանդակում լրացվում է այդ գործարքների (գործառնությունների) հարկման բազան: Օրինակ, հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների մասով տվյալները հաշվարկում արտացոլվում են առանձին տողով՝ այդ տողի 12-րդ կետի 1-ին սյունակում լրացնելով «15» թիվը, 2-րդ սյունակում՝ «4» թիվը, իսկ [12.Ա] սյունակում՝ այդ գործարքի հարկման բազան:

16. Հաշվարկի 13-րդ կետում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) առևտրի հարկով հարկվող գործունեությունից իրացման շրջանառությունը:

17. Հաշվարկի 14-րդ կետում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) հաստատագրված վճարներով հարկվող գործունեությունից իրացման շրջանառությունը:

18. Հաշվարկի 15-րդ և 16-րդ կետերում համապատասխանաբար լրացվում են տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) Օրենքով սահմանված դեպքերում հաշվարկված ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորության (ԱԱՀ-ի կրեդիտի) ավելացման կամ պակասեցման ենթակա գումարները:

19. Հաշվարկի 17-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է [6.Ա], [7.2Ա], [8.Ա], [11.Ա], [12.Ա], [13.Ա], [14.Ա] վանդակներում նշված թվերի հանրագումարի և [7.1Ա], [8.Բ] վանդակներում նշված թվերի տարբերությունը, իսկ [Բ] վանդակում լրացվում է [6.Բ], [7.2Բ], [8.Բ], [9.Բ], [10.2Բ], [15.Բ] վանդակներում նշված թվերի հանրագումարի և [7.1Բ], [10.1Բ], [16.Բ] վանդակներում նշված թվերի տարբերությունը՝ ըստ համապատասխան եռամսյակների:

20. Հաշվարկի 18-րդ կետի՝

1) [Ա] վանդակում լրացվում են Արցախի Հանրապետության տարածք Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ներմուծված ապրանքների մաքսային արժեքները (հարկման բազաները), այդ թվում՝ ներմուծված այն ապրանքների մասով, որոնց ներմուծման պահին ԱԱՀ չի գանձվում կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ԱԱՀ չի հաշվարկվում ու չի վճարվում.

2) [Բ] վանդակում լրացվում է ապրանքների ներմուծման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված (վճարման ենթակա) ԱԱՀ-ի ընդհանուր գումարը:

21. Հաշվարկի 19-րդ կետի՝

1) [Ա] վանդակում լրացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների

(այդ թվում՝ ԱԱՀ-ով չհարկված) ընդհանուր արժեքը՝ անկախ այն հանգամանքից՝ դրանց դիմաց մատակարարներին վճարում կատարվել է, թե ոչ:

2) [Բ] վանդակում լրացվում է ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների համար մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի ընդհանուր գումարը:

22. Հաշվարկի 20-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) Արցախի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների ընդհանուր հարկման բազան, իսկ [Բ] վանդակում՝ ապրանք մատակարարողների, աշխատանք կատարողների և ծառայություն մատուցողների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի ընդհանուր գումարը: Մույն կետով ներառվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ձեռքբերումների մասով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում արտացոլված տվյալները, որոնք ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից ստացվել և Օրենքի 19.1-ին հոդվածով սահմանված կարգով վավերացվել են մինչև հաշվարկի ներկայացման համար Օրենքի 33-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ սահմանված վերջնաժամկետը՝ անկախ վճարումը բանկային փոխանցմամբ կատարած լինելու հանգամանքի: Այն դեպքերում, երբ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ձեռքբերումների մասով հարկային հաշիվները մատակարարների կողմից դուրս են գրվում հաշվարկի ներկայացման համար Օրենքի 33-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ սահմանված վերջնաժամկետից հետո, ինչպես նաև մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներն ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից Օրենքի 19.1-ին հոդվածով սահմանված կարգով վավերացվում են հաշվարկի ներկայացման համար Օրենքի 33-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ սահմանված վերջնաժամկետից հետո, այդ հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է այդ հարկային հաշիվները Օրենքի 19.1-ին հոդվածով սահմանված կարգով վավերացնելու օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկի 23-րդ կետում՝ որպես հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարի ավելացում:

23. Հաշվարկի 21-րդ կետի 1-ին ենթակետի [Ա] վանդակում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) ձեռքբերումներին վերաբերող Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 1-ին կետով սահմանված դեպքերում՝ դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը: Հաշվարկի 21-րդ կետի 2-րդ ենթակետի [Ա] վանդակում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) ձեռքբերումներին վերաբերող Օրենքի 33-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 2-րդ կետով սահմանված դեպքերում՝ դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

24. Հաշվարկի 22-րդ կետում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում, Օրենքի 24²-րդ և 24³-րդ հոդվածների դեպքում՝ նաև ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարի այն մեծությունը (մասը), որի մասով հաշվանցում կատարելու իրավունքի ձեռքբերման պահը, համաձայն Օրենքի 23-րդ, 24²-րդ և 24³-րդ հոդվածների, հետաձգվում է մինչև այդ հոդվածներով սահմանված ձեռքբերումների դիմաց վճարման պահը:

25. Հաշվարկի 23-րդ կետում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) Օրենքի համաձայն կատարվող վերահաշվարկների արդյունքում հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների ավելացումը կամ

պակասեցումը՝ ըստ Օրենքով սահմանված հիմքերի՝ լրացնելով հոդվածի և կետի համարները: Մասնավորապես՝

1) ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չհամարվող, ԱԱՀ-ից ազատված և առևտրի հարկով կամ հաստատագրված վճարներով հարկման ենթակա գործարքներին, որոնց մասով ԱԱՀ-ի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարվում:

2) հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցվող ԱԱՀ-ի այն գումարները, որոնց մասով հաշվանցման իրավունքը հետաձգվել էր և Օրենքի 23-րդ և 24²-րդ հոդվածների համաձայն ենթակա է հաշվանցման տվյալ հաշվետու ժամանակաշրջաններում:

3) ԱԱՀ-ի այն գումարները, որոնց մասով Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված դեպքերում պետք է կատարվեն վերաձևակերպումներ:

4) ԱԱՀ-ի այն գումարները, որոնք Օրենքի 6.1-ին հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարողների կողմից ենթակա են հաշվանցման (հաշվարկված պարտավորություններից պակասեցման) դրանց վճարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող հաշվարկով:

26. Հաշվարկի 24-րդ կետում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) դեբետագրման արդյունքը, ընդ որում, եթե՝

1) $([18.Բ]+[19.Բ]+[20.Բ]-[21.1Բ]+[21.2Բ]-[22.Բ]+[23.Ա]-[23.Բ])$ հավասար է 0-ի, ապա հաշվարկի 24-րդ կետի [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»:

2) $([18.Բ]+[19.Բ]+[20.Բ]-[21.1Բ]+[21.2Բ]-[22.Բ]+[23.Ա]-[23.Բ])$ մեծ է 0-ից (դրական է), ապա այդ հաշվարկի 0-ից տարբերվող թվի բացարձակ մեծությունը լրացվում է հաշվարկի 24-րդ կետի [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0»:

3) $([18.Բ]+[19.Բ]+[20.Բ]-[21.1Բ]+[21.2Բ]-[22.Բ]+[23.Ա]-[23.Բ])$ փոքր է 0-ից (բացասական է), ապա այդ հաշվարկի 0-ից տարբերվող թվի բացարձակ մեծությունը լրացվում է հաշվարկի 24-րդ կետի [Բ] վանդակում, իսկ [Ա] վանդակում լրացվում է «0»:

27. Հաշվարկի 25-րդ կետում լրացվում է ներմուծված այն ապրանքների մաքսային արժեքը (հարկման բազան) և ԱԱՀ-ի գումարները, որոնք Օրենքի 6.1-ին հոդվածի համաձայն պետք է արտացոլվեն պարտավորության առաջացման հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող հաշվարկում՝ որպես ներմուծված ապրանքների մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ պարտավորության գումարներ: Հաշվարկի 25-րդ կետում արտացոլված գումարները հաշվետու ժամանակաշրջանում Արցախի Հանրապետության տարածքում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների համար ԱԱՀ-ի պարտավորության ընդհանուր գումարի հաշվարկմանը չեն մասնակցում:

28. Հաշվարկի 26-րդ կետում լրացվում է տվյալ կիսամյակում (ըստ եռամսյակների) պետական բյուջե վճարման ենթակա կամ հաշվանցման (բյուջեից վերադարձման) ենթակա ԱԱՀ-ի գումարները: Ընդ որում՝

1) եթե լրացված է հաշվարկի 24-րդ կետի [Ա] վանդակը, ապա $([17.Բ] - [24.Ա])$ հաշվարկի 0-ից տարբերվող արդյունքը լրացվում է՝

ա. [Ա] վանդակում, եթե այդ արդյունքը դրական թիվ է, և [Բ] վանդակում լրացվում է «0»:

բ. [Բ] վանդակում՝ բացարձակ արժեքով, եթե այդ արդյունքը բացասական թիվ է, և [Ա] վանդակում լրացվում է «0»:

2) եթե լրացված է հաշվարկի 24-րդ կետի [Բ] վանդակը, ապա $([17.Բ] + [24.Բ])$ արդյունքը լրացվում է [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0»:

3) եթե հաշվարկի 24-րդ կետի [Ա] և [Բ] վանդակներում լրացված են «0»՝ ապա $([17.Բ])$ վանդակի արդյունքը լրացվում է [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0»:

4) եթե լրացված է հաշվարկի 24-րդ կետի [Ա] վանդակը, և $([17.Բ] - [24.Ա])$ հաշվարկի արդյունքը հավասար է 0-ի՝ հաշվարկի 26-րդ կետի [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

2019 թվականի հուլիսի 31-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 5-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 201-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի փետրվարի 17-ի «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի, եկամտային հարկի և կուտակային վճարի, տարեկան եկամուտների մասին հաշվարկների, կազմակերպության կողմից որպես հարկային գործակալ եկամտային հարկի պահում (գանձում) և պետական բյուջե վճարում կատարելու պարտավորություն ստանձնելու մասին հայտարարության, կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ֆիզիկական անձանց հաշվարկված և վճարված եկամուտների, իրականացված նվազեցումների և պահված եկամտային հարկի գումարների, ինչպես նաև գործատուի (վարձու) աշխատողի համար կատարված կուտակային վճարների մասին և Արցախի Հանրապետությունում ոչ ռեզիդենտին վճարած հարկերի մասին տեղեկանքների ու գրանցման հայտի և եկամտային հարկի անձնավորված հաշվարկի ընդունման մասին ստացականների ձևերը սահմանելու մասին» N 5-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանի՝

ա. վերնագրում «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ» բառերը փոխարինել «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ» բառերով, իսկ «ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏԻՆ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ» բառերը՝ «ՏԵՂԵԿԱՆՔԻ» բառով,

բ. 2-րդ, 3-րդ և 6-րդ ենթակետերում «կուտակային» բառերը փոխարինել «սոցիալական» բառերով,

գ. 7-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2) հրամանով սահմանված N 1 հավելվածի՝

ա. 4-րդ բաժնի 4-րդ և 5-րդ բաժնի 4-րդ ենթաբաժինների վերնագրերում «Պարտադիր կուտակային վճարներ կատարելը» բառերը փոխարինել «Սոցիալական վճարի կատարումը» բառերով,

բ. 4-րդ բաժնի 4-րդ և 5-րդ բաժնի 4-րդ ենթաբաժիններում «պարտադիր կուտակային վճարներ կատարելը» բառերը փոխարինել «սոցիալական վճարի կատարումը» բառերով.

3) հրամանով սահմանված N 2 և N 3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

4) հրամանով սահմանված N 4 հավելվածում՝

ա. «Կուտակային համակարգի» բառերը փոխարինել «Կուտակային կենսաթոշակային համակարգի» բառերով,

բ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. «Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցության կարգավիճակ» տողում նշվում է կուտակային կենսաթոշակային համակարգում ֆիզիկական անձի մասնակցության կողմ. 1՝ սոցիալական վճար կատարող չէ, 2՝ սոցիալական վճար կատարող է, 3՝ դիմումի հիման վրա սոցիալական վճար կատարող է»,

գ. 1-ին և 3-րդ բաժիններում «եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարների» բառերը փոխարինել «սոցիալական վճարի» բառերով,

դ. 3.1-ին և 4-րդ բաժիններում «կուտակային» բառերը փոխարինել «կենսաթոշակային» բառերով,

ե. 26-րդ կետում «21» թիվը փոխարինել «20» թվով,

զ. 29-րդ կետից հանել «, եթե $[4.7] \times 10\% > 5000$ դրամ x փաստացի աշխատած ամիսների թիվ, $[4.8] = 5000$ դրամ x փաստացի աշխատած ամիսների թիվ, եթե $[4.7] \times 10\% < 5000$ դրամ x փաստացի աշխատած ամիսների թիվ (յուրաքանչյուր ամսվա հաշվով 5000 դրամ)» բառերը,

է. 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30. $[4.9]$ տողում լրացվում է տարվա համար հաշվարկված եկամտային հարկի հանրագումարը՝ ելնելով հետևյալ հաշվարկից՝ տող $[4.9] =$ տող $[2.8] +$ տող $[4.4] +$ տող $[4.8]$, եթե տող $[4.4] +$ տող $[4.8] > 5\ 000$ ՀՀ դրամ x փաստացի աշխատած ամիսների թիվ, տող $[4.9] =$ տող $[2.8] + 5\ 000$ ՀՀ դրամ x փաստացի աշխատած ամիսների թիվ, եթե տող $[4.4] +$ տող $[4.8] < 5\ 000$ ՀՀ դրամ x փաստացի աշխատած ամիսների թիվ (յուրաքանչյուր ամսվա հաշվով 5 000 ՀՀ դրամ)»,

ը. 5-րդ բաժնում «Պարտադիր կուտակային» բառերը փոխարինել «Սոցիալական» բառերով, «Կամավոր կուտակային» բառերը՝ «Կամավոր կենսաթոշակային» բառերով, «պարտադիր կուտակային» բառերը՝ «սոցիալական» բառերով, իսկ «կամավոր կուտակային» բառերը՝ «կամավոր կենսաթոշակային» բառերով,

թ. 5-րդ բաժնի 37-րդ կետից հանել «հետևյալ հաշվարկներից ելնելով՝» բառերը և աղյուսակը.

5) հրամանով սահմանված N 6 հավելվածում՝

ա. տեղեկանքի վերնագրում «կուտակային» բառը փոխարինել «սոցիալական» բառով,

բ. «, կատարված կուտակային կենսաթոշակային վճարների» բառերը փոխարինել «ու սոցիալական վճարի» բառերով, «Ժամանակավոր անաշխատունակության» բառերից հետո լրացնել «և մայրության» բառերը, «Պարտադիր կուտակային» բառերը փոխարինել «Սոցիալական» բառով, իսկ «պարտադիր կուտակային» բառերը՝ «սոցիալական» բառով,

գ. 32-րդ տողում և 32-րդ տողի բացատրությունում «կուտակային» բառերը փոխարինել «կամավոր կենսաթոշակային» բառերով,

դ. 16-րդ տողի բացատրությունում «հղիության ու ծննդաբերության» բառերը փոխարինել «մայրության» բառով.

6) հրամանով սահմանված N 7 հավելվածն ուժը կորցրած ճանաչել:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2019 թվականի հուլիսի 31
ք. Ստեփանակերտ

Հավելված
Արցախի Հանրապետության
ֆինանսների նախարարի 2019 թվականի
հուլիսի 31-ի N 201-Ն հրամանի

«Համաձայնեցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
«18» փետրվարի 2014թ.
_____ Ս. Թևոսյան

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր հարկային
պետական ծառայության պետի
«17» փետրվարի 2014թ.
N 5-Ն հրամանի

Ձև

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՐԿ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՄՄԱԿԱՆ ____ (տարի) ____ (ամիս)	Փաստաթղթի մուտքագրման համար <hr style="width: 80%; margin: 0 auto;"/> <i>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</i>										
Հարկ վճարողի անվանում	Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)										
Հաշվարկի ներկայացման ամսաթիվ՝	<table border="1" style="display: inline-table; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> </tr> </table>										
Հաշվարկի ներկայացման ամսաթիվ՝	Չափի միավոր՝ Դրամ										

1. «Փաստաթղթի մուտքագրման համար» մասում նշվում է հարկային մարմնում հարկային գործակալի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր) անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, «Հարկ վճարողի անվանում» տողում ինքնաշխատ լրացվում են կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), իսկ «Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)» տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

ԲԱԺԻՆ 1. ԳՈՐԾԱՏՈՒԻ ԵԿԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿ՝ ԸՍՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

Աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) նույնականացման տվյալներ			Հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա (ստացված) եկամտի գումար					Վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ				Եկամտային հարկ	Մոցիալական վճար
Ազգանուն	Անուն	Հանրային ծառայությանների համարանիշ (ՀՕՀ)	Ցբարևունքների դատակարգի կոդ	Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցության կարգավիճակ	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	Քաղաքացիա-իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրություն	Այլ հարկվող եկամուտ (բացի նպաստներից)	Հարկվող եկամտի նվազեցման գումար	Գործատուի միջոցներով վճարված նպաստների գումար	Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով վճարված նպաստների գումար	Ավելի վճարված նպատի գումարի հետպահում	Հարկի գումար	1.14
1.1	1.2	1.3	1.4	1.5	1.6	1.7	1.8	1.9	1.10	1.11	1.12	1.13	1.14
								()					
								()					
								()					
								()					
								()					
								()					
ԲԱԺԻՆ 1.1. ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՍ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԱՅԼ ՀԻՄՔԵՐՈՎ ՎՃԱՐՎԱԾ ԵԿԱՍՈՒՑ													
								()					
								()					
								()					x
ԸՆԴԱՄԱՆՆԵՐ													
								()					

2. 1-ին բաժնում տրվում է հաշվետու ամսվա համար հարկային գործակալի (գործատուի) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկը՝ ըստ բոլոր (վարձու) աշխատողների. յուրաքանչյուր (վարձու) աշխատողի համար լրացվում է մեկ տող (անկախ հաշվետու ամսում եկամուտներ ստանալու հանգամանքից):

3. [1.1], [1.2] և [1.3] սյունակներում ինքնաշխատ լրացվում են (վարձու) աշխատողի նույնականացման տվյալները. [1.1] և [1.2] սյունակներում՝ (վարձու) աշխատողի ազգանունը և անունը, [1.3] սյունակում՝ հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը):

4. [1.4] սյունակում ինքնաշխատ լրացվում է (վարձու) աշխատողի գրադմունքի (պաշտոնի, մասնագիտության) կոդը, [1.5] սյունակում ինքնաշխատ լրացվում է կուտակային կենսաթոշակային համակարգում (վարձու) աշխատողի մասնակցության կոդը. 1՝ սոցիալական վճար կատարող չէ, 2՝ սոցիալական վճար կատարող է, 3՝ դիմումի հիման վրա սոցիալական վճար կատարող է:

5. [1.6] սյունակում նշվում են հաշվետու ամսվա համար վարձու աշխատողին հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, [1.7] սյունակում նշվում են հաշվետու ամսվա համար քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) դիմաց աշխատողին փաստացի վճարված եկամուտները (պայմանագրային եկամուտը), [1.8] սյունակում նշվում են (վարձու) աշխատողին վճարված [1.6] և [1.7] սյունակներում չընդգրկված և «Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով հարկվող այլ եկամուտները (այդ թվում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափը գերազանցող առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները, աշխատողներին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերից ավելի վճարված փոխհատուցման վճարները, աշխատողին վճարված օգնության գումարները), [1.9] սյունակում նշվում են հարկվող եկամտի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերը չգերազանցող կամավոր կենսաթոշակային վճարների գումարները՝ ոչ ավելի, քան $([1.6]+[1.7]+[1.8]+[1.10]+[1.11]) - ([1.6]+[1.7]+[1.8]+[1.10]+[1.11]) : 1,05$:

6. [1.10] սյունակում նշվում են հաշվետու ամսում գործատուի միջոցներով վարձու աշխատողին վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները, [1.11] սյունակում նշվում են հաշվետու ամսում Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով վարձու աշխատողին վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները, [1.12] սյունակում նշվում են հաշվետու ամսում հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստի հետ պահվող գումարները: Յուրաքանչյուր վարձու աշխատողի համար նշված սյունակներից որևէ մեկը լրացված լինելու դեպքում լրացվում (բացվում) է հետևյալ աղյուսակը՝

Աշխատողի ազգանուն, անուն	Հանրային ծառայությունների համարանիշ (ՀՕՀ)	Նպաստների և հետպահման դասակարգման կոդ	Ժամանակավոր անաշխատունակության ու հղիության և ծննդաբերության (հետպահման)		Նպաստի գումար կամ հետ պահվող գումար		
			ավելի քան (օրը, ամիսը, տարին)	ավարտ (օրը, ամիսը, տարին)	Գործատուի միջոցներով	Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով	Հետ պահվող գումար
Ընդամենը							

13. «Վճարված եկամտի դասակարգման կող» սյունակում նշվում է եկամտի վճարման հիմքը (կողը). 1՝ դատարանի վճռի հիման վրա աշխատանքի վերականգնման դեպքում հարկադիր պարապորդի վճարում, 2՝ դատարանի վճռի հիման վրա նպաստի վճարում, 3՝ դատարանի վճռի հիման վրա այլ եկամտի վճարում, 4՝ նախորդ հաշվետու ժամանակահատվածներում ավարտված քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքի կատարման) դիմաց եկամտի վճարում, 5՝ նախորդ հաշվետու ժամանակահատվածներում աշխատանքից ազատված աշխատողին այլ բազային եկամտի վճարում, 6՝ նախորդ հաշվետու ժամանակահատվածներում աշխատանքից ազատված վարձու աշխատողին աշխատավարձ և դրան հավասարեցված եկամտի վճարում:

14. «Ընդամենը» տողում ինքնաշխատ լրացվում են [1.6]-ից մինչև [1.15] սյունակների հանրագումարները:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՐԿՎՈՂ ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Եկամտի և քաղաքացիության կող	Եկամտի ընդհանուր գումար	Դրույքաչափ (%)	Եկամուտները ստացողների թվաքանակ	Եկամտային հարկի գումար
2.1	2.2	2.3	2.4	2.5
Ընդամենը				

15. 2-րդ բաժնում տրվում է հաշվետու ամսում տվյալ հարկային գործակալի կողմից բոլոր ֆիզիկական անձանց վճարված հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկը. յուրաքանչյուր եկամտի տեսակի և քաղաքացիության համար լրացվում է մեկ տող:

16. [2.1] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար [2.2] սյունակում նշված եկամտի և եկամուտը ստացողների քաղաքացիության կողը (Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացի կամ օտարերկրացի՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ), [2.2] սյունակում լրացվում են հաշվետու ամսվա համար հաշվեգրված այլ եկամտատեսակների գումարները (որոնք հարկվում են առանձին դրույքաչափերով), [2.3] սյունակում նշվում է ընտրված եկամտին և քաղաքացիության կողին համապատասխանող եկամտային հարկի դրույքաչափը, [2.4] սյունակում լրացվում է [2.2] սյունակում նշված եկամուտներ ստացողների թվաքանակը (հաշվարկում չի մասնակցում), [2.5] սյունակում լրացվում է եկամտային հարկի գումարը ($[2.5]=[2.2] \times [2.3]$):

17. 2-րդ բաժնում յուրաքանչյուր տողը (բացառությամբ 13-րդ տողի) լրացված լինելու դեպքում լրացվում է հետևյալ աղյուսակը՝

Հանրային ծառայությունների համարանիշ (ՀՇԶ)	Անուն	Ազգանուն	Հայրանուն	Անձր հաստատող փաստաթղթի		Մշտական բնակության վայրի հասցե	Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) ժամանակավոր բնակության վայրի հասցե	Վճարված եկամտի տեսակ (կող)	Եկամտի ընդհանուր գումար	Դրույքաչափ (%)	Եկամտային հարկի գումար
				տեսակ	Մեղիա և համար						

18. Ըստ տողերի հարկային գործակալի կողմից, բացառությամբ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների, անձնավորված լրացվում են Արցախի Հանրապետության ֆիզիկական անձանց և Արցախի Հանրապետություն-

նում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց՝

1) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (առկայության դեպքում),

2) անունը, ազգանունը, հայրանունը (հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը լրացված լինելու դեպքում դաշտերը լրացվում են ինքնաշխատ),

3) Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացու անձնագրի (մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայականի) կամ նույնականացման քարտի, օտարերկրյա քաղաքացու, քաղաքացիություն չունեցող անձի՝ Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթի, փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի, օտարերկրյա (այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության) քաղաքացու՝ անձնագրի տեսակներից որևէ մեկը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը,

4) անձը հաստատող փաստաթղթում գրանցված մշտական բնակության վայրի հասցեն (պարտադիր նշելով մշտական բնակության երկիրը),

5) Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) ժամանակավոր բնակության վայրի հասցեն,

6) վճարված եկամտի տեսակը (կողմ) և եկամուտ ստացողի քաղաքացիության կողմը (Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացի կամ օտարերկրացի՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ),

7) կողին համապատասխան վճարված եկամտի ընդհանուր գումարը:

Եկամտի տեսակ	Եկամտի կոդ	Դրույքաչափ (%)	Եկամտի կոդ	Դրույքաչափ (%)
	Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացի		Օտարերկրացի	
1. Ռոյալթի	001	6	101	10
2. Տոկոս	002	5	102	10
3. Շահում	003	20	103	20
4. Մրցանակ	004	20	104	20
5. Նվիրատվություն, օգնություն	005	20	105	20
6. Ապահովագրական հատուցում	006	20	106	5
7. Գույքն օտարելու դիմաց եկամուտ	007	6	107	x
8. Գույքի արժեքի հավելած	008	x	108	10
9. Վարձավճար	009	6	109	10
10. Փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտ	010	20	110	5
11. Ֆիզիկական անձի համար ապահովագրավճար	011	20	111	20
12. Կամավոր կենսաթոշակներ	012	6	112	6
13. Չհիմնավորված վճարումներ	013	10	113	10
14. Նվազեցման կատարման տարվան հաջորդող 12-ամյա ժամանակահատվածում չվճարված պասիվ եկամուտներ	014	10	114	10
15. Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի աշխատանքի վարձատրություն	015	x	115	20
16. Այլ եկամուտներ	099	20	199	20

ԲԱԺԻՆ 3. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Եկամտային հարկի գումար (հաշվարկված)	Եկամտային հարկից նվազեցվող նպաստների գումար (վճարված)	Ավելի վճարված նպաստների գումարների հետպահում	Եկամտային հարկ (վճարման ենթակա)	Սոցիալական վճարներ (վճարման ենթակա)
3.1	3.2	3.3	3.4	3.5
	()			

19. 3-րդ բաժնում տրվում են հաշվետու ամսվա համար բոլոր (վարձու) աշխատողների եկամտային հարկի և սոցիալական վճարների հաշվարկի ամփոփ տվյալները:

20. [3.1] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը ($[3.1]=[1.13]+[2.5]$), [3.2] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով վճարված և եկամտային հարկից նվազեցվող ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների ընդհանուր գումարը (եթե $[3.1]>[1.11]$, ապա $[3.2]=[1.11]$, հակառակ դեպքում $[3.2]=[3.1]$), [3.3] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում ավելի վճարված հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստների վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստների հետ պահվող ընդհանուր գումարը ($[3.3]=[1.12]$), [3.4] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը ($[3.4]=[3.1]+[3.2]+[3.3]>=0$), և [3.5] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա սոցիալական վճարների գումարը ($[3.5]=[1.14]$):

Հարկային գործակալի (գործատուի) պատասխանատու անձի (անձանց) ստորագրություն(ներ)
--

Համաձայնեցված է
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության ֆինանսների և
 էկոնոմիկայի նախարար
 «18» փետրվարի 2014թ.
 _____ Ս. Թևոսյան

Հավելված N 3
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 կառավարությանն առընթեր հարկային
 պետական ծառայության պետի
 «17» փետրվարի 2014թ.
 N 5-Ն հրամանի

2և

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ _____ (տարի) _____ (ամիս)		Փաստաթղթի մուտքագրման համար	
		<i>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</i>	
Աշխատողի նույնականացման տվյալներ			
Ազգանուն		Անուն	
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)			
Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)			
Անձը հաստատող փաստաթղթի տեսակ		Սերիա և համար	
Հաշվարկի ներկայացման ամսաթիվ՝		Չափի միավոր՝	Դրամ

1. «Փաստաթղթի մուտքագրման համար» մասում նշվում է հարկային մարմնում աշխատողի անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, իսկ հետագա տողերում ինքնաշխատ լրացվում են ֆիզիկական անձի նույնականացման տվյալները. «Ազգանուն» և «Անուն» տողերում՝ աշխատողի ազգանունը և անունը, «Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)» տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, «Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)» տողում՝ աշխատողի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը), «Անձը հաստատող փաստաթղթի տեսակ» և «Սերիա և համար» տողերում՝ համապատասխանաբար ինքնաշխատ լրացվում են Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) անձը հաստատող փաստաթղթի տեսակներից որևէ մեկը՝ Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետության անձնագիր, նույնականացման քարտ, մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայական, օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ (կացության քարտ, Ռուսաստանի Դաշնության քաղաքացու դեպքում՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացու անձնագիր), փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ ու անձը հաստատող համապատասխան փաստաթղթի սերիան և համարը:

2. 1-ին բաժնում տրվում է հաշվետու ամսվա համար (վարձու) աշխատողի եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկը՝ ըստ բոլոր գործատուների (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր)։ յուրաքանչյուր գործատուի համար լրացվում է մեկ տող։

3. [1.1] և [1.2] սյունակներում լրացվում են գործատուների նույնականացման տվյալները. [1.1] սյունակում լրացվում է կազմակերպության անվանումը և կազմակերպատիրավական ձևը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), իսկ [1.2] տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը։

4. [1.3] սյունակում ինքնաշխատ լրացվում է տվյալ գործատուի (վարձու) աշխատողի զբաղմունքի (պաշտոնի, մասնագիտության) կոդը, [1.4] սյունակում ինքնաշխատ լրացվում է կուտակային կենսաթոշակային համակարգում (վարձու) աշխատողի մասնակցության կոդը. 1՝ սոցիալական վճար կատարող չէ, 2՝ սոցիալական վճար կատարող է, 3՝ դիմումի հիման վրա սոցիալական վճար կատարող է։

5. [1.5] սյունակում նշվում են հաշվետու ամսվա համար տվյալ գործատուի վարձու աշխատողին հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, [1.6] սյունակում նշվում են հաշվետու ամսվա համար քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) դիմաց աշխատողին փաստացի վճարված եկամուտները (պայմանագրային եկամուտը), [1.7] սյունակում նշվում է վարձու աշխատողի ստացած ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները (որոնք վճարվում են գործատուի միջոցների հաշվին և բյուջեից փոխհատուցման ենթակա չեն)։

6. [1.8] սյունակում նշվում են (վարձու) աշխատողին վճարված՝ [1.5], [1.6] և [1.7] սյունակներում չընդգրկված և «Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով հարկվող այլ եկամուտները (այդ թվում՝ աշխատողին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափը գերազանցող առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերից ավելի վճարված փոխհատուցման վճարները, աշխատողին վճարված օգնության գումարները), [1.9] սյունակում նշվում են հարկվող եկամտի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերը չգերազանցող կուտակային վճարների գումարները ոչ ավելի, քան $((1.5)+(1.6)+(1.7)+(1.8)) - ((1.5)+(1.6)+(1.7)+(1.8)):1,05$ ։

7. [1.10] սյունակում լրացվում է հաշվետու ամսում տվյալ գործատուի (վարձու) աշխատողի [1.5], [1.6], [1.7], [1.8] և [1.9] սյունակներում նշված եկամուտներից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դրույքաչափերով հաշվարկված եկամտային հարկի գումարը։

8. [1.11] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում (վարձու) աշխատողի [1.5] և [1.6] սյունակներում նշված եկամուտների հանրագումարից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերով հաշվարկված սոցիալական վճարի գումարը։

9. «Ընդամենը» տողում ինքնաշխատ լրացվում են [1.5]-ից մինչև [1.11] սյունակների հանրագումարները։

ԲԱԺԻՆ 2. ՀԱՐԿՎՈՂ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Եկամտի և քաղաքացիության կոդ	Եկամտի ընդհանուր գումար	Դրույքաչափ (%)	Եկամուտները վճարողների թվաքանակ	Եկամտային հարկի գումար
2.1	2.2	2.3	2.4	2.5
Ընդամենը				

10. 2-րդ բաժնում տրվում է հաշվետու ամսում բոլոր տնտեսավարող սուբյեկտներից տվյալ ֆիզիկական անձի ստացած հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկը. յուրաքանչյուր եկամտի տեսակի և քաղաքացիության համար լրացվում է մեկ տող:

11. [2.1] պունակում նշվում է հաշվետու ամսվա համար [2.2] պունակում նշված եկամտի և եկամուտը ստացողի քաղաքացիության կոդը (Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացի կամ օտարերկրացի՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ), [2.2] պունակում լրացվում են հաշվետու ամսվա համար հաշվեգրված այլ եկամտատեսակների գումարները (որոնք հարկվում են առանձին դրույքաչափերով), [2.3] պունակում նշվում է ընտրված եկամտին և քաղաքացիության կոդին համապատասխանող եկամտային հարկի դրույքաչափը, [2.4] պունակում լրացվում է [2.2] պունակում նշված եկամուտներ վճարողների թվաքանակը (հաշվարկում չի մասնակցում), [2.5] պունակում լրացվում է եկամտային հարկի գումարը ($[2.5]=[2.2] \times [2.3]$):

Եկամտի տեսակ	Եկամտի կոդ	Դրույքաչափ (%)	Եկամտի կոդ	Դրույքաչափ (%)
	Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացի		Օտարերկրացի	
1. Ռոյալթի	001	6	101	10
2. Տոկոս	002	5	102	10
3. Շահում	003	20	103	20
4. Մրցանակ	004	20	104	20
5. Նվիրատվություն, օգնություն	005	20	105	20
6. Ապահովագրական հատուցում	006	20	106	5
7. Գույքն օտարելու դիմաց եկամուտ	007	6	107	x
8. Գույքի արժեքի հավելած	008	x	108	10
9. Վարձավճար	009	6	109	10
10. Փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտ	010	20	110	5
11. Ֆիզ. անձի համար ապահովագրավճար	011	20	111	20
12. Կամավոր կենսաթոշակներ	012	6	112	6
13. Այլ եկամուտներ	099	20	199	20

ԲԱԺԻՆ 3. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Եկամտային հարկի գումար (հաշվարկված)	Հետ պահված նպաստների գումարներից վճարված եկամտային հարկի վերականգնում	Եկամտային հարկ (վճարման ենթակա)	Սոցիալական վճարներ՝ ընդամենը
3.1	3.2	3.3	3.4
	()		

12. 3-րդ բաժնում տրվում են հաշվետու ամսում բոլոր գործատուներից տվյալ ֆիզիկական անձի ստացած (ստացման ենթակա) հարկվող եկամուտներից եկամտային հարկի և սոցիալական վճարների հաշվարկի ամփոփ տվյալները:

13. [3.1] պունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը ($[3.1]=[1.10]+[2.5]$), [3.2] պունակում լրացվում է հետ պահված նպաստներից վճարված եկամտային հարկի վերականգնման գումարը, [3.3] պունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա եկամտային հարկի ընդհանուր

գումարը ($[3.3]=[3.1]+[3.2]$), և $[3.4]$ սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա սոցիալական վճարների գումարը ($[3.4]=[1.11]$):

Հարկ վճարողի ստորագրություն

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

2019 թվականի հուլիսի 31-ի

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌՐԸԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 05-Ի N 4-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 202-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2013 թվականի մարտի 05-ի «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվարկի ձևն ու լրացման կարգը սահմանելու և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2007 թվականի հունվարի 25-ի թիվ 06/Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 4-Ն հրամանով սահմանված հավելվածի՝

1) հաշվարկի ձևի 8-րդ տողում և հաշվարկի լրացման կարգի 9-րդ կետում «մատուցումից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցումից» բառերը:

2) հաշվարկի ձևի 9-րդ տողում և հաշվարկի լրացման կարգի 10-րդ կետում «գործունեությունից» բառերից հետո լրացնել «կամ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցումից» բառերը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**2019 թվականի հուլիսի 31
ք. Ստեփանակերտ**